

ԱՐՏՈՒՆԵ ԵՆՑԱՆ



ԴԱՅԳԱՐԻ ԴՐՈՇՆԵՐ



ՄԱՍԿԵՏԱՍԱՆ

ԴԱՅՄԷԱԾԳՆԵՐ



891.925
7-29



ՍՐՏՈՒՇ ԵՂՅԱՆ

824.00 Ա

5-29

և

ՊԱՅՔԱՐԻ

ԴՐՈՇՆԵՐԸ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

1933 թ.



0 104 2013



1764-2004



15902-53

Книгоиздательство
"СЕВЕРНЫЙ КАВКАЗ"



ԱՐՏՈՒՆԵ ԵՆԱՆ

20218 8398

БИБЛИОТЕКА
АКАДЕМИИ НАУК
СССР

49531 кк1

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ
Մ. Վ. ԿՈՄԱՆԱՆԻ
Ե. ՄԱՍԻՍԵԱՆԻ

ՊԱՅԳԱՐԻ ԴՐՈՇՆԵՐԸ

Յերեկոյ յեր:
 Լուսինը ծածկվել էր ամպերով և ամպերի տակից նշմարվում էր նրա սահելը:
 Աշնան ցուրտ յերեկոյ յեր:
 Ծառերը սկսել էին մերկանալ, փչում էր սառը քամին: Փողոցում վոչ վոք չկար, միայն ծառերից թափված տերևներն էին մահվան մեղեգի յերգում:
 Սուլում էր քամին անմարդ փողոցում և ծառերից ցած բերում չորացած—գեղնած վերջին տերևները:
 Մերթնդամերթ լավում էին շատ հեռվից շների հաշոցներ:
 Խավարը տիրել էր ամեն կողմ:
 Փողոցի աջ կողմից գլորվելով առաջ էր շարժվում մեկը: Ահա նա ցած գլորվեց. լուսվեց կտորվող շէի ձայն:

Նա մոմոռում էր:

Վեր կացավ, ձեռքերը պատերին հենե-
լով դարձյալ առաջ շարժվեց:

... ամեցեք թառը
խորովեք գառը
գինու. բակալը
անգին բան է...

յերգում էր նա քթի տակ:

Յերբեմն ծիծաղում բարձրաձայն, հետո
ծիծաղը փոխում սուլոցի, նորից յերգի և
այսպես շարունակ:

— Պահ... պահ... պահ, քեֆ արեք, քեֆ,
քեֆ — բղավում էր նա անմարդ փողոցում
և նրա ձայնը քամին տանում էր հեռու, հե-
ռու և ցրում բաց ողում:

կիսամաշ կաշվե պինջակը հագին, գլխար-
կը աչքերն ընկած, նա շարժվում էր պա-
տերին հենվելով:

Հասավ տան բակը:

Բակի դռնով ներս մտնելիս՝ տեսավ
շանը:

— Ճուճազ գինի... ճուճազ գինի...

Շունը նստած տեղից հանգիստ կեր-
պով պոչն էր խողացնում ու նայում հար-
բած Արտաշին:

Թախկ-թրախկ — վտաներով թակեց դուռը:
— Ո՞վ է — լավեց ներսից մի բարակ

ձայն:

— Ով է — հեգնեց Արտաշը — չգիտես վոր
յես եմ, ել ո՞վ պիտի լինի:

Գուռը բացվեց:

Արտաշը շեմքում յերերվեց, ապա ըն-
կավ հատակին:

— Ելի հարբած ե, մայրիկ — խոսեց Ան-
նիկը:

Արտաշի բերանից վարչ հոտ էր փչում:
Աննիկը հետ-հետ գնաց, Արտաշը փոր-
ձեց բարձրանալ: Կնոջ և աղջկա ոգնությամբ
Արտաշին մի կերպ գցեցին թախտին:

— Արտաշ, ախր դու մեր տունը քան-
դում ես, մեզ գերեզման հորում, մենք մե-
ռած ենք ու թաղած չենք, եդ լավ իմա-
ցիր, ախր բոլորի աչքից ընկել ես, ախր ա-
մոթ ա վերջապես, եսպես բան չի լինի, թող
բռնածդ գործը, ել մի հարբի, Արտաշ, չե
վոր հրաման կա, վոր նույնիսկ մի որ գոր-
ծալքի դեպքում դուրս վոնդեն գործարա-
նից, — աղաչում էր Ռայան, Աննիկի մայրը:

Արտաշը լսում էր Ռայայի ասածը և կար-
ծես թե հասկանում էր, բայց աչքերը չեր

հեռացնում Աննիկից, վորը նստած էր դեմ-
առդեմ, իրեն եր նայում խղճահարված հա-
յացքով:

— Լավ իմացիր, վոր կենտգործկոմի վո-
րոշման համաձայն, մի որվա գործալքման
համար, մի ժամվա ուշանալու համար բան-
վորը իսկույն հեռացվում է գործարանից,
վորպես աշխատանքային զիսցիպլինան
խաղղող գործալքիչ:

Արտաշի դեմքը մթապնեց:

Պառկեց քնելու:

Գիշերվա ժամը մեկն անց էր, սենյա-
կում լամպը հանգցվեց, տիրեց խավարը և
նրանք քնեցին: Գիշերային խավարի մեջ
միմիայն լավում էր Արտաշի խումփոցի ան-
համաչափ յեղևեջը:

Դրսում ըամին շարունակում էր վոու-
նալ:

II

Աննիկը մի տասնհինգամյա միջահասակ
աղջիկ էր, նշաձև աչքերով, մուգ շագանա-
կադույն ծամերով: Գլխին ուներ բրդե թե-
լեց գործած կարմիր գլխարկ, իսկ վզին
պիոններական կարմիր վզկապ:

Կարմիր գլխակը և վզկապը, կարծես
իրենց ուեֆլեքան ելին քցել Աննիկի դեմքին,
դեմքը նույնպես կարմրագույն էր:

Նրան առաջին անգամ տեսնող անձա-
նոթը կկարծեր, թե այս աղջիկը իր կյան-
քում յերբեք հիվանդացած չի յեղել:

— Դու հորդ տիպին հակառակն ես,
Անկա— հաճախ ասում էր մայրը:

— Այո, մայրիկ, վորովհետև հայրիկը
հարբեցող է, իսկ յես...

— Ճիշտ ես ասում, Անկա ջան, ճիշտ
ես ասում— ցածր ձայնով ասում էր մայրը
և գլուխը կախ գցում:

Մայրը յերբեմն գանգատվում էր Աննի-
կին, վոր այս կա, այն չկա— այս պակասու-
թյունն ունենք, տանը հաց չի ձարվում,
իսկ հայրդ միշտ հարբած է տուն գալիս:

— Բա ինչու հայրիկին վոչինչ չես ասում,
վոր չհարբի, վոր մենք մարդավարի
ապրենք:

— Բա չեմ ասում, Անկա ջան, դու վոր
գալոց ես գնում կամ տանը չես լինում,
յես միշդ հորդ հետ կոխվ եմ անում, իսկ
նա ասում է, վոր չեմ կարող առանց գինու
մնալ, կհիվանդանամ...

— Յե՛վ դու ել հավատում ես, մայրիկ...

— Ե՛հ, բալաս...

— Սուտ ե ասում, մայրիկ, սուտ ե ասում. յես գիտեմ մի մարդու, վոր առաջ խիստ հարբեցող ե յեղել, խակ հիմա... հիմա...

Աննիկի աչքերում արցունքներ յերեկացին և նա խեղդվող ձայնով շարունակեց:

—... Իսկ հիմա նա ամենալավ բանվորն ե, հարվածային և աշխատում ե այն բաժնում, վորտեղ աշխատում ե հայրիկը: Ըսպասիր, մայրիկ, սպասիր, յես դեռ հայրիկի...

— Ե՛հ, Անկա ջան, յես ինչ արեցի, վոր դու ինչ պիտի անես, բալաս...

Աննիկը համբերությունից դուրս յեկավ:

— Ե՛հ, թող, մայրիկ, հայրս խորհրդային բանվոր ե, հմ. վոչ, նա միայն փող կորդող ե իշխանությունից, յես հարբեցող հայր չեմ ուզում, այլևս գործալքիչները տեղ չունեն մեր շարքերում, նրանք կուլակի հետևորդներն են, մեր թշնամին, յես հայր չունեմ...

Աննիկի աչքերից արցունքները ցայտեցին հատակին, դուռը բացվեց և Աննիկը դուրս թռավ գլխաբաց...

Քամին փչում եր:

Անձրևը մաղվում եր կամաց, և թըջում եր Աննիկի գանգուր ծամերը:

Աննիկը գլխաբաց ու անվերարկու վազում եր ցեխոտ փողոցով:

Ավտոները, կառքերը սլանում են արագ, մարդիկ տուն են շտապում:

Ուժեղ կայծակին հաջորդում ե ամպի ուժեղ վորտոր:

Աննիկը վազում ե, մարդիկ հետ են դառնում, նայում նրան և զարմացած շարունակում իրենց ճանապարհը:

Ահա նա ծովեց փողոցը, դարձյալ շարունակում ե վագել, շունչը կտրվում ե, քրտինքի կաթիլները արագորեն ցած են հոսում ճակատից, հե՛վում ե, վտտները չեն հնազանդվում իրեն, բայց նա դեռ վագում ե, հա վագում:

— Ախ հայր..., հայր...

Քայլերը դանդաղեցրեց:

Մարտուռ անցավ նրա մարմնով:

Անձրևը սկսեց սաստկանալ, բամբին անձ-

բևի կաթիլները հրում եր Աննիկի յերեսին,
գլխին, մարմինն:

Նա թրջվել եր:

Աննիկը կանգ առավ մի հին ցուցանակի
առջև:

Ցուցանակը յերևում եր, վոր յերկար
ժամանակ կախված եր պատից: Անձրևները
և փոշին, քամու հետ, իրենց ցանկացած
գեբը կատարել էին, խավարացնելով ցու-
ցանակում նկարված զինու շշերը և ցու-
ցանակագիրը:

Դա գինեվաճառ Յեզորի գինետունն եր:

Դրսից վոչինչ նշմարելի չեր, վորովհետև
ապակիները հակառակ կողմից ներկված էին:

Մամոտած պատերը վկայում էին նրա
հնուլթյունը:

Աննիկը մի պահ կանգ առավ գինետան
դռան մոտ և ականջ դրեց:

Լսելի յեղան յերաժշտուլթյան, հարբած-
ների և շշերի ձայներ:

Աննիկի սիրտը սկսեց բաբախել, ական-
ջը մոտեցրեց բալանու անցքին և ձեռքը
սրտին դրեց, կարծես թե ուզում եր լռե-
ցնել սրտի բաբախոցը, լսելու համար այն-
տեղ իր հոր ձայնը:

Անցքից ձայները յսվում էին շատ խո-
րից. լսելի յեղան վոտնաձայներ:

Աննիկը յերկու քայլաչափ հետ քաշվեց և
սպասում եր դուրս յեկողին:

Դուռը յերկար ժամանակ չբացվեց: Ան-
նիկը դարձյալ ուզում եր մոտենալ, յերբ
դուռը ձուռալով բացվեց:

Դուրս յեկողը հիսունն անց մի մարդ
եր, առանց գլխարկի, մագերը ցանուցիր,
նրա թերանից փչում եր գինու և ծխախո-
տի անախորժ հոտ:

Գլորվելով դուրս յեկավ և քթի տակ
մոմոալով ծովեց մյուս փողոցը և գնաց:

Դուռը բաց եր մնացել:

Աննիկը յերկար նայեց ներս, բացի շշե-
րից և սրբիչը ուսին գցած մարդուց վո-
չինչ չտեսավ:

Չայները գալիս էին խորը տեղից:

Սրագ ներս մտավ և սրբիչով մարդուց
հարցրեց թե՛

— Ընկեր, հայրս այստեղ ե:

Սրբիչով մարդը զարմացած նայեց Ան-
նիկին:

— Հալըիկդ ո՞վ ե:

— Սրտաշը:

— Հա, այստեղ է, վարը գինի յե խմումս:
Աննիկի աչքերը կարծես արյունով լց-
վեցին. գլուխը կախ գցեց:

— Իսկ դու ո՞վ ես—հարցրեց սրբի-
չով մարդը:

Պատասխան չկար:

— Ինչո՞ւ կամաչես, փոքրիկս. դու Ար-
տաշի ի՞նչն ես:

Դարձյալ պատասխան չլսվեց:

— Խնդրեմ ինձ ցույց տաք իմ հոր տեղը:

— Այ, այստեղ, վարը գինի յե խմումս:
Աննիկը յերկու քայլ արեց դեպի ձախ
և աստիճաններով ցած իջավ:

Նրա առաջ բացվեց յերկու սրահներ,
փոքրիկ լուսամուտներով, վորոնցից գրեթե
լույս չեր թափանցում:

Չնայած նրան, վոր վառվում էր ելեկ-
տրական լամպան, բայց ողը լցված լինելով
ծեախոտի ծխով, յերևում էյին միայն մշու-
շոտ պատերը և մարդիկ շքերով:

Այ կողմում նստած էյին յերաժիշանե-
րը, իսկ պատերի տակին, սեղանների շուր-
ջը նստած էյին մարդիկ:

Վոչ վոք ուշադրություն չդարձրեց Ան-
նիկի վրա, նրան չնայեցին ել:

Հերթով անցավ սեղանների մոտից և
ահա նրա աչքերին ընկավ հայրը, գինու
շիշը սուռչին:

— Հայր—ձեռք նա:

Սեղանի շուրջը հավաքվածները շուտ
յեկան ու նայեցին Աննիկին:

Արտաշը նույնպես նայեց:

— Ո՛հ, բարե ես յեկեղ, աղջիկս, յեկ, յեկ
գինի խմիր, մի վախիր, չե՞ վոր յես քո
հայրն եմ...

— Յես հայր չունեմ...

Արտաշը աչքերը հառեց վերեւ և ասում-
ների տակից մոնչաց՝

— Յեկ...

— Շնորհակալ եմ—մեղմացավ Աննի-
կը— գինին ձեզ պահեցեք, իսկ հիմա քեզ
տանը կանչում են, գնանք:

Արտաշի սեղանակիցները զարմացած
նայում էյին Աննիկի զգաստ գեղբուն և լը-
սում նրա այդ տեսակ ձևով խոսակցելը իր
հոր հետ:

— Լավ, դու գնա, յես կգամ:

— Վոչ, միասին գնանք—հրամայական
յեղանակով շարունակեց Աննիկը:
Արտաշը վերկացավ:

Աննիկը վերև բարձրացավ աստիճաններով և սպասեց հորը:

Հայրը ուշացավ:

Աննիկը ցած նայեց, տեսավ հայրը չի կարողանում բարձրանալ աստիճաններով: Գլորվում է:

Ցած իջավ և բռնելով նրա թևից, ոգնեց հորը վերև բարձրանալ:

Նրանք դուրս յեկան և ծովեցին փողոցը:

Անձրևը դադարել էր:

— ...լայ... լայ... լայ... — յերգում էր Արտաշը:

— Հայրիկ, ամօթ ե, դըսում չի կարելի յերգել:

— Տայ... լայ... լայ... հոգուդ մեռնեմ — շարունակում էր յերգել Արտաշը:

Աննիկի ճարը կտրվեց, հորը տարավ խուլ նրբացքներից, փորպեսզի մարդիկ չըպատահեն ճանապարհին:

Աննիկը հոգնել էր, հազիվ էր կարողանում բռնել հոր թևից, փորը ուզում էր ուժով պոկել և մենակ գնալ:

Հասան տուն:

Մայրը կանգնած էր դռանը:

— Անկա, այդ վճրտեղից եք գալիս հորը հետ միասին:

— Գինետնից, մայրիկ, գինետնից, գնացել էյինք գինի կոնծելու — քմծիծաղ տալով պատասխանեց Աննիկը:

Արտաշին ներս տարան և մի կերպ պառկացրեցին:

— Մայրիկ, շատ հոգնեցի, մինչև վոր հայրիկին գինետնից այտեղ բերեցի, տես շորերս ինչպես են թրջվել:

— Շատ ապրես, բայաս, միայն շուտ շորերդ փոխիր, վոր չհիվանդանաս:

Աննիկը անցավ մյուս սենյակը:

Ռայան գնաց Արտաշի մոտ:

Արտաշը անհանգիստ խուռացնում էր, նրա բերանից գարշ հոտ էր փչում:

Անցավ յերեք ժամ, Արտաշը վեր կացավ և նստեց: Աչքերը թարթեց և լայն բաց արավ:

— Այ կնիկ, յես վճրտեղ եմ:

— Տանր:

Աննիկը լսեց խոսակցությունը և մյուս սենյակից դուրս յեկավ:

— Հայրիկ, ամօթ քեզ...

1169-1004 (502-57)



— Ինչո՞ւ.

— Չգիտե՞ս ինչու.

Արտաշը չպատասխանեց:

— Հայրիկ, դու բանվոր ես, հա՛.

— Իհարկե, ինձ վարպետ Արտաշ են
ասում:

— Իսկ հիմա...

— Նույնպես.

— Վո՛չ, սխալվում ես, հիմա քեզ վարպետ
կոնծող են ասում, գործալքիչ, կուլակին
հետևորդ, վնասարար, դու լեբբեկցե չե՞ս
լսել:

— Չե՛հ.

— Դե՛հ, սրանից հետո բոլորի բերանից
կլսես, բայց ամոթ ե...

Արտաշը աչքերը հառեց հանուկին և
հառաչեց՝

— Եխ, եխ, Անկա ջան...

III

Պիոնեռական ակմբում այսոր անսո-
վոր ուրախություն եր տիրում:

— Լյովա, դու քանի՞ ժամվա կոնտրակ-
տացիա յես կնքել—հարցրեց Բուրյան Սա-
միկը:

— Բառասուն և ութ ժամվա:

— Իսկ յես, թե իմանաս քանի ժամվա:

— Դու վաթսուն ժամվա, հա՛:

— Վո՛չ, յես կնքել եմ յոթանասուն
ժամվա և մրցման եմ հրավիրում քեզ ու
մեր ողակի բոլոր անդամներին:

— Լյովա՛ա...

Լյովան հետ դարձավ:

— Հավաքույթը վաղուց սկսվել է, իսկ
դուք այստեղ ո՞վ դիտե ինչ հիմար բանի
մասին եք խոսում—բարկացավ փոխողա-
կավար Դավիթը:

— Ընկեր Դավիթ...

— Դե լավ, դե լավ, անցեք հավաքույթի՝
Լյովան ու Սամիկը անցան մյուս սենյակը
հավաքույթի:

Ողակավար Մուկուչը խոսում եր այն
մասին, թե «պետք է գտնենք այնպիսի
միջոցներ, զոր պայքարենք դեռևս մնացած
հին սովորությունների դեմ, աշխատանքա-
յին ղիտցիպլինան ամրացնելու և կենտգործ-
կոմի գործալքման առթիվ փորոշման շուր-
ջը հրավիրելու բոլորի ուշադրությունը,
հանուն արդֆինպլանի կատարման և արտա-
դրության փորակի բարձրացման:

Բոլորը լուռ մտածում էին:
Լուռ երևում էր և Գուգուշը, վորին տղաները
«կոմիկ» անունն էին կպցրել, նրա շատ
կատակների համար:

Բոլորը դեմքերը ցած կախած, ընկել
էին խորը մտածմունքների մեջ: Նրանց
ականջին դեռ հնչում էր ողակավար Մու-
կուշի խոսքերը.

«... Պայքարենք գործալիքների և հար-
քեցողների դեմ, հանուն արդֆինալանի
կատարման և գերակատարման...»

— Գտն, գտն — տեղից վեր ցատկելով
բղավեց Գևորգը:

— Լավ, մի բղավի, ինչ վոր ասելու յես,
ասա — նկատողություն արեց ողակավարը:

Բոլորը ուշադրությամբ լսում էին Գե-
վորգին:

— Հը, դե ասա — կրկնեց ողակավարը:

— Սպասեք ե, մտիցս գնաց — գլուխը
քորելով ասաց Գեվորգը:

Բոլորը ծիծաղեցին:

— Հա, հա, ասեմ, ասեմ, միտս ընկավ...

— Եհ, դե ասա, զահլա մի տար..

— Գիտե՞ք ինչ, յես առաջարկում եմ
այն բանվորը, վոր իջեցնում է արտադրու-

թյան վորակը խախտում է աշխատանքային
դիսցիպլինան, սուգանել...
— Չեեեեգնով...

Գուգուշին միաբերան:

Նորից տիրեց լուռթյուն:

Մնացում էին ըոպեներ և վոչվոք չեր
ուղում խանգարել լուռթյունը:

Ելի անցան մի քանի ըոպեններ:

Մուկուշը գլուխը կախ, ինչ վոր բան
էր նշանակում բլոկ-նոտումը:

Լուռթյունը խախտեց Աննիկը, ձեռք
բարձրացնելով:

— Ընկեր ողակավար, մտածել եմ, ա-

սեմ:

— Ասա:

— Ամենից առաջ պետք է նշել, վոր կենսա-

գործկոմի վորոշումը գործալքման առթիվ,
վոր հրահանգում է վարչության՝ մի որ գոր-

ծալքման համար բանվորին հեռացնել գոր-

ծարանից, ինքն այդ վորոշումը արդեն մի

մեծ խթան է աշխատանքային դիսցիպլինան
ամրացնելու և արդֆինալանը մինչ ժամ-

կետը կատարելու:

Մեզ անհրաժեշտ է հասարակացնել այդ
վորոշումը, բարձրացնել նրա բարձր նշա-

նակութիւնը և լարել բոլորի ուշադրու-
թյունը նրա շուրջը:

Սակախ այդ վորոշումը վերջակետ չի
դնում մեր ձեռներեցութիւններին՝ կռվելու
հին սովորութիւններէ դեմ և սոցիալիստա-
կան ձեւերով պայքարելու և դաստիարակե-
լու մեր բանվորութեան:

Յես առաջարկում եմ արդֆինպլանի
կատարման և գերակատարմանն աջակցելու,
աշխատանքային զիւցիպլինան ամրացնելու
և արտադրութեան վորակը բարձրացնելու
համար, ունենալ յերկու գույնի՝ զրոշները,
որինակի համար, մեկը կարմիր, մյուսը դե-
ղին գույնի: Այն բանվորը, վորը լավ է
աշխատում և հարվածային է, նրա սարքո-
ցին փակցնել «կարմիր, աշխատանքի հետ-
սի դրոք» իսկ այն բանվորը, վոր տալիս
է շատ խոտան, արեցող է, հետամնաց և
տեխնիկային լավ չի տիրապետում, նրա
սարքոցին փակցնել «դեղին, սիմուլյանտի
զրոշը»: Ահա այս է իմ առաջարկու-
թիւնը:

Վոչ վոր ձայն չեր հանում:
Բոլորը նայում էին Աննիկի և ուրախ
և՛ գարմացած դեմքին:

— Հը, դեհ ասեք, չի՞ անցնում իմ ա-
ռաջարկը:

— Շատ ճիշտ է, ընդունում ենք, ըն-
դունում ենք— ձայնեցին միաբերան:

— Ընկերներ — խոսողը ողակավարն
եր—յես Աննիկից այսպիսի բան չեյի ըս-
պատում, նա այնպիսի առաջարկութիւն
արավ, վոր յես հիացա...

— Կեցցես Աննիկ, կեցցես, ազնիվ խոսք,
շատ հիանալի առաջարկութիւն է— հավա-
նութիւն տվեց կողմարը:

Աննիկը նստեց, նա կարմրել էր:
Նա հիշեց հորը՝ Արտաշին. նա հարբե-
ցող է, ախր չե՞ վոր Արտաշը իր հայրն է,
իսկ ինքը պիտներ. նա հիշեց բանվոր
Վաղոյի ասածը, վոր հորը բարձրացրել են
սև ապիտակին: Աննիկը մտքում վորոշեց,
վոր յեթէ իր առաջարկն անցկենա, պետք
է ինքն անպատճառ հոր սարքոցին խփի
«դեղին գործալիքի զրոշը», վոր հայրը ևս
դառնա բանվոր Վաղոյի նման հարվա-
ծային:

— Այո, պետք է այսպես պայքարենք
— շնչաց Աննիկը. բոլորը նայում էին
Աննիկի մտածկոտ դեմքին:

— Այո, պետք է կովենք, յեթե կռիվ է:
Առաջարկության քվեարկման պատաս-
խանք, յերկարատև ծափահարություններ:
Քարտուղարը արձանագրեց:

— Վաղվանից Ույան և Լյոյվան կանցնեն
դրոշակների պատրաստմանը, իսկ Աննիկը
ներկ ձեռք կբերի դրոշակների վրա գրե-
լու համար—հայտարարեց կովարը:
Հավաքույթը վերջացավ:

IV

Առավոտյան ժամի տասն ե:
կովար Բազեն, ողակավար Մուկուշը
և պիոներ Աննիկը մտան տեքստելի գոր-
ծարկոմի գրասենյակը:

Դիմացի գրասեղանի մոտ նստած եր-
մի կարճահասակ, գանգուր մազերով և
բրոնզագույն դեմքով մեկը, իսկ կողքի գը-
րասեղանի մոտ—գործավար Թագուշը:

Նրանք յերկուսն ել գրադված էյին, գը-
լուխները կախ, սրանց մանելը հնկատեցին:
— Բարև ձեզ, ընկեր Բագրատ—բարևեց
կովարը:

Նա դուռը վերև բարձրացրեց և բա-
րևեց:

— Ընկեր Բագրատ, միլավ բան ենք ձեռ-
նարկել, ձեր գործարանի արդֆինսյանի
կատարման և արտադրության վորակը բար-
ձրացնելու համար:

— Ապա, ապա, ի՞նչ բան է—ասաց նա
և հետաքրքրությամբ նայեց յերեքին:

— Մենք պիոներական ակմբում,
հավաքույթի ժամանակ, վորոշել ենք, վոր ոգ-
նենք ձեր պլանների կատարմանը՝ հետ կյալ
կերպ—ամեն մի պիոներ գործարանին խոս-
տանում է տալ բառասունից—վաթսուն ժամ
և կան այնպիսիները, վորոնք դեռ ավելին
են աշխատելու—կովարը հանեց ցուցակը
և տվեց Բագրատին:

— Շատ ուրախ ենք, շատ հիանալի
է — ուրախությունից ձեռքերը տրորեց
նա:

— Ելի բան ունենք ասելու, Բագրատ:

— Ասացեք խնդրեմ:

— Վորպեսզի ձեր գործարանի բանվոր-
ները շատ գործալիք չտան, մենք ձեռնար-
կել ենք հետևյալը:

Ցեվ կովարը բացատրեց բանի եյու-
թյունը:

— Ինչ հիանալի միտք, դուք մեր իս-

կական բարեկամներն եք և ճիշտ վոր դուք
մեր լավ ոգնականները կլինեք:

Գործավարը սառած աչքերով չափեց
նրանց վոտից գլուխ և ասաց՝

— Ուրեմն այդ ձեր առաջնորդն է, ինչ
հիանալի միտք:

— Հիմա, ձեզանից ուզում ենք գոր-
ծալիք և հարբեցող բանվորների անուն-
ները:

— Ընկեր Թագուշ—տուր այն բանվոր-
ների անունները, վոր յերեկ քեզ տվեց տա-
բելը շնիկ Դմիտրին:

Թագուշը բաց արեց սեղանի արկղը և
գտնելով ցուցակը, ասաց՝

— Ահա սրանք են:

Աննիկը հետաքրքրվեց, ցուցակը վերց-
րեց և աչքի տակով նայեց ցուցակին:

«Ասաարյան Արտաշ», ընկան նրա աչ-
քերին:

Նա կարմրեց, աչքատակից նայեց վերև,
սուղգելու՝ արդյոք իրեն են նայում:

Հանգստացավ, յերբ տեսավ, վոր նրանք
իրար հետ ինչ վոր բանի մատին են խոսում:

— Սպասիր դեռ, հայր, քո աղջիկը կը
պայքարի քո դեմ—ընչաց Աննիկը:

Կովարը հետ դարձավ:
— Ինձ հետ եյիր, Աննիկ:
— Վոչ, ասում եմ ուշ ե, գնանք:
Նրանք դուրս յեկան գրասենյակից:

Վ

Վաղուց հնչել էր տեքստիլի առաջին
շահլը:

Բաղաքը յեռ ու դեռի մեջ էր:

Աննիկը վաղուց դպրոց էր գնացել:

Սենյակում դեռ խոխոեցնում էր Ար-
տաշը և տարորինակ շարժուձևեր էր ա-
նում:

— Բռնեցեք, բռնեցեք—բղավեց նա
անկողնում—թրբմի— և ցած գլորվեց:

Արթնացավ:

Աչքերը թարթեց և իրեն գտնելով հա-
տակին կամաց-կամաց վեր կացավ:

— Ուշացել եմ, այ կնիկ, շատ եմ ու-
շացել քա ինչո՞ւ ձայն չտվեցիր, հը—գո-
ուաց կնոջ վրա, վորը խոհանոցում աշխա-
տում էր:

— Բա ձեռն չտվեցիր, ինչ անեմ, վոր վեր
չկացար. քեզ ո՞վ կարող է բան հասկացնել:
Հիմա յեւ գնում ես ինչ անես, մեկ է, հետ

պիտի դառնաս, հաշիվդ փակված ե: Յես
ասում եի, վոր վերջը դու մեր գլխին պա-
տիժ պիտի դառնաս, գործից կհեռացնեն,
տանն. ել ծախելու բան չի մնացել, ինչով
պիտի ապրենք այդ մասին դու հեշ չես
մտածում:

Արտաշը գլխարկը ուղղելով, ճանապարհ
ընկավ դեպի աշխատանքի վայրը:

— Ուշացել եմ, շատ եմ ուշացել, համա-
տեսնես թե ե՞նչ կասի գործարկումը:
Հասավ գործարան:

Հենց վոր ուզում եր ներս մտնել գոր-
ծարան, նրա տոաջ կտրեց գործարկում
Բագրատը:

— Ոհո, ես ի՞նչ բանի յես, վարպետ Ար-
տաշ—հարցրեց նա տարակուսված—յերեք
ժամ ուշացել ես, գնա դրասենյակ, հաշիվդ
տես, արդեն հրահանգով գործից արձակ-
ված ես:

Արտաշը գլուխը կախեց, ուղեց գոնե
մի վորևե պատճառ բերի արդարանալու
համար, բայց լեզուն կապ ընկավ:

Գործարկում Բագրատը այլևս ձայն չհանեց
և թողեց հեռացավ, Արտաշին թողնելով
շվարած:

Ներսից լավում եր մեքենաների ադմուլն
ու ձիչը, անիվների շառաչը, թելերն
խզողոցը և այս բոլորը միասին ներկա-
յացնում էյին կատարյալ գործարանային
համերգ:

Արտաշը շվարել եր ու մտածմունքնե-
րի մեջ ընկած, կանգնել դռանը:

— Մտնեմ, թե չմտնեմ,—հարցնում եր
ինքն իրեն ու պատասխան չեր գտնում:
Քիչ էլ կանգնած մնաց տեղում և վեր-
ջապես վորոշեց մտնել:

Յեվ մտավ...

Դրոշներ, կարմիր... դեղին...

Արտաշը բան չհասկացավ, շարժվեց ա-
ռաջ իր մեքենայի մոտ, ուր արդեն աշխա-
տում եր ուրիշ բանվոր:

Այստեղ ես դրոշակ դեղին գույնով:
Կարծես մի ինչ վոր բան կար վրան
գրված:

Արտաշը բացեց ծալվածքը և կարդաց:

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՂԼԵԿՏԻՎԻՅ
ԳՈՐԾԱԼԻԲ
ԱՐՏԱՇ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

կարծես իր աչքերին չհավատաց, մեկ
եյ կարգաց՝ աչքերը դեղին դրոշին հառած:
Նա չեր հասկանում, ի՞նչ է կատար-
վում իր շուրջը, ո՞վ է խփել այս դեղին դր-
ոշը իր սարքոցին, և թե ինչի՞համար ե այն:
— Զրախկ—հանկարծ կանգ առան մե-
քենաները միասին:

Լուեց աղմուկը:

Հանգստի ժամն էր:

— Արտաշ, այ Արտաշ—ձեռքը Արտա-
շի ուսին խփելով ասաց Վաղոն—ես ի՞նչ
բանի լես, քանի՞ ժամ ես ուշացել:

Արտաշը սկի յեյ վերև չնայեց, բայց
գլխեր, վոր Վաղոն եր, կոմիերիտ Վաղոն:

— Գնանք, Արտաշ, գնանք, հոգնած ու
քաղցած կլինես—ծիծաղելով ասաց Սի-
մոնը:

Այս խոսքերը նետի նման վիրավորե-
ցին Արտաշի սիրտը և խեթ-խեթ նայեց Սի-
մոնին:

Բոլորը գնացին, Արտաշը մնաց մենակ
և ընկղմվեց խոր մտածմունքների մեջ:

Ո՛ր գնա այժմ, ուրիշ գործարան այլևս
իրեն, վորպես գործալքիչի չեն ընդունի, ի՞նչ
պատասխան տա կնոջը, աղջկան...

Արտաշը դանդաղ քայլերով դուրս եր
գալիս, յերբ աչքը ընկավ Վաղոյի մեքե-
նային փակցրած կարմիր դրոշին:

Հետաքրքրվեց, հետ տարավ շորի ծալ-
վածքը և նրա աչքերին յերևաց բրոնզա-
գույն սառներ:

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՒԵԿՏԻՎԻՑ
ՀԱՐՎԱԾԱՅԻՆ
ՎԱՂԵՆԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հնր-վա-ծային:

Արտաշը դուրս յեկավ գործարանից և
մտավ ճաշարան:

Բոլորը հանգիստ ճաշում էին, ուլեց
դուրս փախչի, բայց Աշոտը կանչեց:

— Բարև Արտաշ:

— Բարև Աշոտ ջան:

— Քեֆդ... հալդ... ծիծաղեց Աշոտը:

— Քեֆըս, հալըս... հեգնանքով պա-
տասխանեց Աշոտը—շատ վատ եմ:

— Վոնց թե, Արտաշ...

— Հենց ընենց, շատ վատ...

— Ախր վոնց ե.

— Եհեհ...

Արտաշը ել չհամբերեց, վորովհետեւ
չատերն իրեն եյին նայում, դուրս թռալ
և գնաց:

VI

Որը չորեքշաբթի յեր:
Գործարանում յերեվում եյին պիոներ-
ները: Նրանք յեկել եյին իրենց պարտքը
տալու գործարանին, վոր գործարանն ել,
իր պարտքը տա յերկրին:
Գործարանային ժխորի մեջ լսվում ե-
յին առույգ պիոներների ժիր յերգը:
...Աշխատողը պիտի
Յեռանդ ունենա,
վոր գործը
Առաջ գնա...
— Ես կարմրիկներն ինչո՞ւ յեն յեկել
հարցրեց Զիրոյան վաչագանը:
— Վահ, չէս տեսնում, մարդիկ յեկել
են աշխատելու համար, յեկել են քո ճեղք-
վածքը ծածկելու—պատասխանեց վաղոն:
Զիրոյանը կրակոտ հայացք բցեց վա-
ղոյի վրա:
վաղոն հաստատ դիրք ընդունեց:
— չը, դուրդ չի գալիս...

վաչագանի դեմքը մռայլվեց և նա հե-
ռացավ:

— Թախ-թախ-թախ-թախ...

— Չախ-չուխ-չուխ...

Լսվում եյին մեքենաների կայտառ հա-
մերգը:

Այո, մեքենաներն ել են յերգում:

VII

Աննիկը գլուխը կախած, դաս եր պատ-
րաստում, յերբ հայրը ներս մտավ:

Աննիկը գլուխը բարձրացրեց և նայեց
հորը, նրանց հայացքները հանդիպեցին մի-
միանց:

— Ի՞նչ ե աղջիկս:

Աննիկը յերեսը ծածկեց և սկսեց ջղա-
յին հեկեկալ...

— Ի՞նչ ե աղջիկս...

— Քեզ գործից վտարել են, վորպես
գործալքիչե, վնասարարի, դու կուլակի հե-
տևորդ ես. յես քո աղջիկը չեմ այլես, այժմ
ի՞նչ պիտի անի խեղճ մայրիկը. քո պատճա-
ռով ինձ ել կզրկեն...

Ու նորից սկսում ե հեկեկալ:

— Բայց ի՞նչ նշանակություն ունի ինձ



համար, ուրիշ աշխատանք կգտնեմ—ցած
ձայնով պատասխանեց Արտաշը:

Արտաշը հետ դարձավ և ձեռքը բերա-
նին դնելով քանի անգամ հազաց:

Ներս մտավ Ռայան, արտասովելով:

— Կավ, հերիքե շիվան անեք. անկողինս
պատրաստիր, յես տկար եմ, պառկել ե
հարկավոր, շուտ:

Արտաշը անցավ մյուս սենյակը:

Յերկու ամիս տկար և թնդործ եր Ար-
տաշը, յերբեմն, յերբ իրեն քիչ լավ եր զգում,
գնում եր որավարձ աշխատանք գտնելու, շատ
նեղություն և զրկանք ե կրում Արտաշի
ընտանիքը այդ յերկու ամսում: Վերջի շա-
բաթվա տկարությունից հետո, մի որ վեր-
կացավ վաղ և հագնվեց:

— Արտաշ, ինչո՞ւ յես վեր կենում, լավ
ես զգում քեզ — հարցրեց Ռայան:

— Վոչինչ, լավ եմ զգում:

Բայց յերբ վեր կացավ, չեր կարողա-
նում վտոքերի վրա կանգուն մնալ:

— Բա ո՞ւր ես գնում հիմա, չե՞ վոր
կմրսես, անկողնուցդ նոր ես վեր, կա-
ցել:

— Գինետուն — յեղավ պատասխանը:

— Գինետուն... Գարձյա՛ր... Սարսա-
փած կոչեց Ռայան և սկսեց լաց լինել:
Արտաշը դուրս յեկավ և քայլերն ուղ-
ղեց դեպի գինետուն:

Նա շտապ շտապ գնում եր, նրա հա-
յացքը սովորականից շատ մուսլ եր:

VIII

Բանակումը բազմամարդ եր այսօր:

— Ինչո՞ւ յեք հավաքվել, այսօր ի՞նչ
կա — հարցրեց մանտյոր Սահակը:

— Ազիտ-դատ կա, ազիտ-դատ — պա-
տասխանեց Բենյամինը և ժպտաց:

Այս ու այն կողմից լավում ելին յերգի
ձայներ:

Անկյուններում նստած խաղում ելին
բանվորները, իսկ մյուս սենյակում բարձ-
րաձայն ընթերցանություն եր Պիոներ Պե-
տիկը կարգում եր թորեն Ռադիսի «զա-
սակարգը», իսկ բանվորներն ուշադրու-
թյամբ և նետաքրքրությամբ լսում ելին:

Հնչեց զանգը:

Թաղերը և ընթերցանությունը դադա-
րեցին, բոլորն անցան դահլիճ և տեղեր
զրավեցին:

Վերջին նստարաններից մեկի վրա տեղ
եր գրպակել Աննիկը:

Բացվեց վարագույրը, յերեկաց կարմիր
կտորով պատած սեղանը, շրջապատված
հինգ հոգով:

— Ընկերներ, այսօր կայանում ե տեքս-
տիլի գործալիք և հարբեցող բանվորնե-
րի ազխա-դասը, կենտգործկոմի և ժողկոմ-
խորհի՝ «անհարգի պատկառով գործալի-
թյան համար արձակել աշխատանքից» վո-
րոշումը ունի հսկայական նշանակութիւն՝
աշխատավորական դիսցիպլինան բարձրաց-
նելու և արտադրութեան վորակը լավացնե-
լու համար: Արդյունաբերական վարչապետ-
ների վրա պարտադրութիւն ե դրված մեծ
ուշադրութեամբ հոգալ բանվորների պարե-
նավորման գործը: Պարենավորման գրքույկ-
ներն այժմ գտնվում են վարչութեան ձեռ-
քում և բանվորն ու ծառայողը արձակվե-
լուն պես, պարենավորման գրքույկը վեր-
ցնում են նրանից և վոչնչացնում: Իհարկե
սա մեծ նշանակութիւն ունի աշխատանքի
դիսցիպլինան և բանվորների պարենավոր-
ման գործը բարվոքելու համար:

Մինչ այս, գործալիքը և լեռուներ ամիս-

ներով ոգտվում էյին պարենավորումից՝ բա-
րեխիդձ կերպով աշխատող շանվորների հետ
հավասար:

Լեւինը ֆարբիկներն ու գործարան-
ները կապիտալիստներից եկսպրոպրիացիա
անելու յերկրորդ ուրը հարց եր դրել՝ «վրն-
ուականապիտաւ քարձացնել աշխատանքի դիս-
ցիպլինան»: Ինքնադաստիարակութեան գոր-
ծում խորհրդային բանվորը նույնպես ունի
հսկայական նվաճումներ: Առաջվոր յեռան-
դով լի հարվածային բանվորը մեր հիմնար-
կութիւնների կենտրոնական որինակն ե:

Սոցմրցումն ու հարվածայնութիւնը
ընդգրկում են միլիոնավոր բանվորների. ա-
շխատանքի ցեանց համար դարձել ե պատկի-
արժանիքի յեվ հերոսութեան գործ:

Սակայն բանվոր դասակարգի գաւազան
լազերում դեռևս շատ կան հին սովորու-
թիւններով ապրող, կուլակի հետեից գնա-
ցող, նրա խոսքը կատարող անգիտակից հե-
տամնաց բանվորներ:

Ահա սրանց մեջ մենք պետք ե սրենք և
ուժեղացնենք մեր աշխատանքը, պարզա-
բանենք կուսակցութեան և կենտգործկոմի
վորոշումները, դաստիարակելու և սոցիա-

լիստական ճանապարհի դնելու, իսկ չարա-
միաների և չուղղվողների դեմ կռվել և
փտարել նրանց մեր միջից:

Յես կարդում եմ անուաները մեր գոր-
ծարանում գտնվող գործալիք և հարբեցող
քանվորների:

Առաջին՝ Զատիկյան կորյուն.

Յերկրորդ՝ Զիլոյան Վաչական.

Յերրորդ՝ Սիմոնյան Բալասան.

Յեվ չորրորդ՝ Ասատրյան Արտա-
շես:

Ահա բոլորը:

Աննիկը հոր անունը լսելուն պես, ա-
կանջներից կարմրեց, կարծես իրեն մի լավ
թակեցին:

Սառը դող անցավ նրա մարմնով:

— Հիմա հորս կիսայտառակեն, ամոթ
ինձ, յես ել պիտներ եմ—մտածում էր
նա:

Նախագահը հերթով կանչեց բոլորին.
Ամեն հարց ու բացազրույթյունից հետո
գահլիճը աղմկում էր՝

— Ամոթ, խայտառակութուն...

— Վնասարարներից են դրանք...

— Վոնդել, փտարել...

Նախագահը և դահլիճում նստած բան-
վորները, նրանց փտարեցին իրենց շարքե-
րից՝ ամոթանքներ տալով:

— Ասատրյան Արտաշես — հնչում է
նախագահի ձայնը:

Աննիկի սիրտը սկսեց արագ-արագ խփել,
ճիշտ այնպես, ինչպիսիք շինետան առաջ, հոր
հետևից գնալիս...

Դահլիճի վերջին նստարանից, գլուխը
կախ, դանդաղ քայլերով մետենում է Ար-
տաշը: Նա համարվում էր լավ արհեստագետ:
Դահլիճում նստած բազմության աչքերը

հետեվում էին նրան:

— Արտաշ դու յել, դու յել...

— Ամոթ է, խելքի յեկ...

— Գործալիք և հարբեցող — իսկ
գործալիքը և հարբեցողը պարզ է, վոր
գործարանի թշնամիներն են — հայտարարում
է նախագահը:

Աննիկը ուզում է վորսալ հոր հայացքը,
բայց չի հաջողվում: Արտաշը աչքերը բե-
վեռած հատակի չոր տախտակներին, լե-
զուն էր կրծում:

— Ի՞նչ ունեք ձեր մասին հայտնելու,
ընկեր Արտաշ—հարցնում է նախագահը

զարձյալ և զանգահարում՝ զհիլծում ա-
ռաջացած աղմուկը զադարացնելու հա-
մար:

— Իմ մասին յես վաշխնչ չունեմ ասե-
լու, միայն կասեմ այն, վոր յես յեղել եմ
հարբեցող, այդ ճիշտ ե. ճիշտ ե և այն, վոր
յես տվել եմ շատ պարապուրդներ, այս բոլորը
ի պատճառ հարբեցողության: Այդ պատ-
ճառով ել ինձ Կործից արձակել են. յես տկար
եյի, այժմ առողջ, հենց յերեկ իմ հաշիմնե-
րը փակեցի գինետան աիբոջ հետ, ընդմիշտ
և դուրս յեկա...

Լսվեց մեկի ծափահարությունը, վորին
հաջորդեցին շատերը հետո ամբողջ զահլիճը.

Այն մեկն Աննիկն եր:

—... Յես խոստանում եմ— շարունա-
կեց Արտաշը— վոր յեթե ինձ ընդունեն
դորժարան, այսուհետեվ կլինեմ ձեզ հետ
միասին, կդառնամ իմ սարքոցի ազնիվ ըն-
կերը և կաշխատեմ հարվածային Վաղոյի
նման...

Ծափահարության ալիքներ:

... Իեղին զրոշակի փոխարեն, իմ սար-
քոցին պիտի փոփոզա աշխատանքի կար-
միբ դրոշը:

Ահա են բոլորը, ինչ պետք է ասելի
իմ մասին:

Գուռ աղմուկը ականջ եր խլացում:

Յերկարատեվ ծափահարությունները
և կեցցները, ժպիտի փոխեցին Արտաշի
թթված դեմքը:

Արտաշի մասին այլևս խոսակցություն-
ներ չեղան: Ազիտ-դատը հայտարարվեց
փակված և բանվորներն ու պիտներները
խոնված դուրս եյին գալիս զահլիճից:

Սմենից վերջը դուրս յեկավ Արտաշը
նախազահի հետ միասին:

Շատերի բերաններին դեռ հնչում եր
«Արտաշ» բառը:

Արտաշը և նախազահը միասին անցան
մի քանի փողոց, վորից հետո նախազահը
բաժանվելով՝ ծովեց սյուռս փողոցը և անհե-
տացավ ետավրում, իսկ Արտաշը մտավ տուն:

Նրա գեմքին այլևս ժպիտ չկար, նա մի
ինչ վոր բանի մասին եր մտածում, մերթ
ընդ մերթ ել կամաց ծիծաղում:

IX.

Առավոտ է: Երբ արև փայտալիցս մտնում
չնչում է տեքստիլի առաջին աշակը:

Անկողնուց վեր ե թռչում Արտաշը, և հազնում բանվորական զգեստը:

Նա արդեն փողոցումն է:

Դեռ յերկրորդ շահը չհնչած, Արտաշը հասալ գործարանի բակը:

Այստեղ հավաքված մի քանի հոգի, խոսում են գործարանի հիվանդագին յերեվույթների մասին:

— Ախր ի՛նչի յե թերակատար մնում պլանը:

— Ախպեր, մենք ենք պատճառը, մենք մեջ մտավ մանտյոր Սահակը:

— Դե թող իմ ձեռը տան գործալիքներին, այնպես կանեմ նրանց, վոր...

— Դե լավ, լավ, դեռ մի վար արի, կատակեց թովոան Վարգուշը:

Ո՛ւ... ո՛ւ... ու...

Հնչում է յերկրորդ աշխատանքի ազդանշանը: Բոլորը ներս են գնում, գնում է և Արտաշը:

Դյուլիսը կախ անցնում է սարքոցի մոտ:

Սարքոցը խնամքով յուղում է և սպասում է աշխատանքի ազդանշանին:

Ահա և ազդանշանը:

Մեքենաներն սկսում են իրենց սովորական համերգը:

Արտաշի համար այսոր մեքենաների համերգը սովորական համերգ չէր, այլ այսոր ավելի հուզիչ էր ու ավելի դուրեկան:

Աշխատանքից հետո յերբ Արտաշը տուն էր գնում, սարքոցը հանձնեց հետեվյալ հերթի բանվոր կարապետ Սանասարյանին և սասց՝

— Իմ ազնիվ ընկերոջ հետ կվարվես խնամքով, հասկացա՛ր, կարո:

— Հասկացա—սասց կարոն ալամա, բայց և այնպես զարմացած:

— Ցտեսություն, կարո:

— Ցտեսություն, Արտաշ...

Արտաշը գնաց, իսկ կարոն յերկար ժամանակ նայում էր այն հարբեցողին, վոր այսոր մարդ է գառել, բան է սովորել յեվ դեռ ուրբիշներին ել պատվերներ տալիս:

Մեքենաների աղմուկի հետ, նրա ալանջին դեռ հնչում էր Արտաշի խոսքերը՝

... Իմ ազնիվ ընկերոջ հետ կվարվես խնամքով...

Որն ուրբաթ եր:

Արտաշը գործարանից վերադառնում
եր տուն:

Ճանապարհին պատահեց զինեվաճառ
Յեգորին. նա ծուռ նայեց Արտաշին, հետո
կեղծ քմծիծաղով մոտեցավ Արտաշին և
հարցրեց. թե՛

— Ել ինչո՞ւ չի գալիս կոնծելու...

Իսկ Արտաշը պատասխանեց.

— Դե, ուադ եղիր, յես հարվածային եմ
Քիչ եր մնում Յեգորն ինքն իրեն ուտի:

— Ֆիլեեե... հարվածային, դո՞ւն ել
հարվածային

Արտաշը, անցել եր:

Անցել էին յերեք ամիսներ:

Մի պայծառ որ եր, արեվը նոր եր
ծագել ու կամաց կամաց բարձրանում եր,
Աշխատանքը վաղուց եր սկսվել տեքս-
տիլում:

Մեքենաների համերգը լսվում էին զեռ
հեռվից, յերբ «տեքստիլիտոպ»-ից ծուվում
ես դեպի գործարանի բակը:

Յես ու գործարկում Բագրատը մտանք
այն բաժինը, վորտեղ աշխատում եր Ար-
տաշը:

Պիոներները յեռանդով աշխատում էին:
Դարձյալ լսվում եր նրանց ժիր յերգե-
րի ձայնը:

Յերգում եր և Աննիկը:

Յես ու գործարկում Բագրատը խոսում ե-
յինք իրար հետ, յերբ լսվեց հանգստի շշա-
կի ձայնը:

— Ընկերներ, վոչ վոք դուրս չգնա —
ներս վազելով հայտարարեց Աննիկը — հա-
վաքվեցեք այստեղ — նա հավաքվելու նշան
արավ ձեռքով:

Բոլորը հավաքվեցին, մենք ևս մոտե-
ցանք նրանց:

Աննիկի ձեռքին թղթով փաթաթված մի
ինչ վոր բան կար, Աննիկը բարձրացավ
սեղանի վրա և սկսեց՝

— Ընկերներ, բանվորներ և պիոներ-
ներ, սրանից մի քանի ամիս առաջ, բան-
վոր Ասատրյան Արտաշի, այսինքն իմ հոր
աարքոցին,...

— Վահ — զարմացական ձայներ լսվե-
ցին բոլորից: Մինչ այս վոչ վոք չգիտեր:

... իմ ձեռքով խփեցի դեղին—գործալիքի դրոշը, Արտաշ Ասատրյանի սարքոցին, իսկ այսօր հորս հերոսական աշխատանքի համար, անհատական պլանը կատարելու և գերակատարելու համար, կուլեկտիվի վորոշման համաձայն, յես իմ ձեռքով կփակցնեմ այս—սա բաց արեց թուղթը և կարմիր դրոշը փողփողաց նրա ձեռքում:

Ծափահարութիւններ..., կեցցեններ...
Աննիկը յերկու ձեռքով բացեց դրոշակը, փրփր վրա կարգացին.

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՒԼԵԿՏԻՎԻՑ
ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲԱՆՎՈՐ
ԱՐՏԱՇ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Ապա Աննիկը ցած թռավ սեղանից, վազեց հոր սարքոցի մոտ, և փակցրեց կարմիր դրոշը:

Արտաշը ուրախութիւնից կարմրել էր:
— Կեցցեն պիտներները, կեցցեն—բզափեց Արտաշը, նա մտաեցավ Աննիկին և

համբուրեց նրա ճակատը—Ապրես, աղջիկս...

— Կեցցեն արդֆինպլանների կատարման և գերակատարման համար պայքարող պիտներները:

— Կեցցե կոմյերիամիության ըեզերվ պիտներ կազմակերպութիւնը:

— Կեցցե.....

ԱՂՎԵՍ ԲԱԳՈՆ

Գնացքը յերկար սուլեց:

Արդեն քաղաքը մոտ էր:

Միմոֆորը նոր մտանք:

Հինգ րօպեյից հետո գնացքը կանգ էր առնելու մոտակա կայարանը:

— Տոմսերը — կանչեց կոնդուկտորը:

Մենք մեր տոմսերը հանձնեցինք կոնդուկտորին և պատրաստվեցինք դուրս գալու:

Կռացա, վոր պայուսակա վերցնեմ, տեսնեա շարժվեց:

Չարմացա:

Պայուսակա վերցրի և ինչ...

Մի տասը տարեկան տղա, փաթաթված ցնցոտիներով, մրոտ, կեղտոտ յերեսով, կծկվել էր նստարանի տակը, պայուսակին հետևը:

— Յեղբայր ջան, բան մի ասի, կոնդուկտորը տեսնի, դուրս կենե կը:

— Այ տղա, դուրս արի, արդեն կայարան ենք հասել, մի վախի:

— Չէ, չէ, կանդուկտորը կ'տեսնի, դուս կենե. ինձ հետ մի խոսի — լացակամած ձայնով աղաչում էր նա:

Գնացքը կանգ առավ:

Պայուսակա վերցրի և դուրս յեկա:

Տղան ևս իջավ կայարան:

Մոտեցա նրան, պայուսակա դրեցի վտաներիս մեջ տեղը, ձեռներս զրպաններս և հարցրեցի:

— Ծնողներ ունե՞ս.

— Չե.

— Ո՞վ է պահում քեզ:

— Յես.

— Ինչո՞վ ես զբաղվում:

— Ինչո՞վ, մի բան կենեմ կը.

— Բազո՞ո... Բազո՞ո, աղվես Բազոն, բղավեցին հեռվից:

Տղան հետ դառավ:

Հեռվից վազեվազ մոտ յեկան չորս աղաներ:

— Աղվես Բազո, յե՞վ եկար:

— Իսի պսեզով եկա, հաց չունիք—հա
ցույց տվեց կանգնած գնացքը:

— Մերո՞ժի քովը կալբաս կա:

— Տվեք, տվեք, անոթի յեմ:

Նրանցից մեկը գրպանից հանեց կալ-
բասի մի կտոր և տվեց Բագոյին:

— Բագո, հաց տո՞մ—ասացի յես.

— Չե, չեմ ուզե:

Մյուս չորս տղաները ուրախացել էյին
և ուրախություններից պար էյին դալիս:

— Բագո, Առյուծը չե՞կավ—հարցրեց
նրանցից մեկը, վոր բոլորից փոքրն էր ու
գունատ դեմքով:

— Չե, չեկավ, մեկել պոեզով կուգա:

Նրանք հանկարծ միասին փոշտացին և
յերկար ծիծաղեցին:

Դա ինձ համար զարմանալի թվաց:

Յես դեռ խոսում էյի Բագոյի հետ,
յերբ նրանցից յերեքը անցան իմ հետևից
և գնացին:

— Բագո, վճրտեղ եք գիշերում:

— Վաղալը, կայնած վագոնների մեջ:

Նրանք իրաւ աչքով արեցին և ծիծա-
ղեցին:

— Երթանք, Բագո, երթանք.

Նրանք գնացին, իսկ յես յերկար ժա-
մանակ նստում էյի նրանց հետևից, մինչև
վոր ծովեցին կայարանի փողոցից:

Յես ցանկացա գնալ:

Պայուսակա չկար:

— Նոր հասկացա, վոր են յերեքը տարան...
Վագե վագ գնացի քաղաք, շատ ման
յեկա, փնտոեցի, բայց իզուր...

II

Այդ որվանից անցել եր չորս տարի:

Յես աշխատում էյի մանկատանը:

Շատ լավ եր այնտեղ, ունեյինք արհես-
տանոցներ, դպրոց, ընթերցարան:

Մանկատան սաները աշխատում էյին
մեղուների ժրջանությամբ:

Չմեռ եր:

Մի որ, յերբ մտա ընթերցարան, գրքե-
րը կարգի բերելու, տղաները շարվել էյին
վառարանի շուրջը:

Ինձ տեսնելով, ինդրեցին վոր մի բան
պատմեմ:

Չմեթեցի:

Սկսեցի պատմել ինձ հետ պատահած
այդ դեպքը՝

— Մի անգամ—սկսեցի յես, յեր գնաց-
քից ցած եյի իջնում, ինձ պատահեց մի
անապատան յերեխա:

Յես հետաքրքրվեցի, թե ինչով ե նա
ապրում, ինչ ե անում և ո՛ւր ե գնում:

Հետո նրան, այդ անապատան տղայի
մոտ վագեցին ուրիշ չորս անապատան
տղաներ և սկսեցին այդ նոր յեկող տղային
հարց ու փորձ անել ու ուրախությունից
թռչկոտել:

Յես ել պայուսակա դրել եյի փոսներիս
մեջտեղը, ձեռներս գրպաններս դրած, կանգ-
նած խոսում եյի այդ պացանի հետ:

Հետո նրանցից յերեքը գնացին...

...յեվ պայուսակը տարան...—լավեց մի
խոպոտ ձայն:

Բոլորը նայեցին նրան, նա կարմրեց և
զլուխը կախեց:

— Ի՞նչ փոքրտեղից գիտեյի:—հարցրե-
ցի յես գորմացած:

— Յես փախցրի, յես—վրա բերեց Սերյոժը:
Բոլորը հռնացին:

— Յեվ ինչպես Բագոն ասաց—չարունա-
կեցի յես—պայուսակա տարան, հետո յերբ
այդ Սերյոժը և իր ընկերը...

— Այսինքն յես—լավեց մի բարակ
ձայն—

— Իա Գուրգենն եր:

— Հա՛, հա՛, հա՛—ծիծաղեցին բոլորը:

— Հետո մնացի մոլորված և դատարկա-
ձեռն գնացի քաղաք:

Հիմա Գուրգենը, Սերյոժը, Արշակը և
Բագոն (Բագրատը) մանկատան լավագույն
սաներն են, նրանք կազմակերպել են պիո-
ներական կոլեկտիվ մանկատնում և Գուր-
գենը կոլվարն ե, իսկ Բագոն նրան փոխա-
րինողը:

Մյուս յերկուսը սովորում են քաղա-
քում:

17 հունվարի 1932 թ.
Լենինական

ՅԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ

Կողմեր Զարիկը այսօր անսովոր ուրախությամբ եր համակված: Իպրոցից վերադառնալով, նույնիսկ չճաշեց և շտապեց ակումբ, հավաքույթի:

Ակմբում հավաքված պիոներներն գրադված էին խաղերով:

Ուղիղ կես ժամ կար հավաքույթը ըսկսելու համար:

Նա բաց արեց մի նամակ և սկսեց կարդալ, հետո նայեց պիոներներին, կարծես թե ստուգելու, արդյոք նրանք ել ուրախացան, ... բայց պիոներները նույն ժրությամբ շարունակում էին իրենց խաղը:

— Սաղերը թողնել, շա՛րքի...

Հերթապահը խաղերն ընդունեց և ինքն էլ ձուլվեց նրանց շարքին:

Մի քանի ազատ վարժություններից հետո, շա՛րքը մտավ ակումբ և ամենքը նստարանների վրա տեղեր զբաղեցրին:

— Ընկերներ, այսօր մեր կոլեկտիվը նամակ ե ստացել գերմանացի պիոներ Հանսից: Կենտրոնը այդ նամակը մեզ ե հասցեագրել:

Բունն ճափահարությունները խլացրին Զարիկի արտասանած վերջին բառերը:

— Ո՞վ կարող ե լավ և բարձր կարգալ, նամակը թարգմանված ե հայերենի...

— Վաղո՞ոն, Վաղո՞ոն...

Վաղենակը նամակը Զարիկի ձեռքից վերցնելով սկսեց բարձրաձայն կարդալ, իսկ մյուսներն ուշադրությամբ լսում էին:

«Միրելի ընկերներ:

Սյժմ մենք դարձել ենք բանվորներ, կապիտալի շահը մեծացնելու համար: Մեր հայրերը չեն աշխատում, նրանք գործազուրկ են:

Կապիտալիստները գերադասում են աշխատեցնել փոքրերին, փորովհետև այստեղ տեխնիկան շատ կատարելագործված ե, մեզ շատ ժամանակ աշխատեցնում են մի կո-

ճակ, մի պտուտակ պտտացնելու համար և
կամ կապիտալիստի յերեխայի համար խա-
ղալիքներ ենք պատրաստում:

Բացի դրանից, մեզ համեմատաբար շատ
քիչ են վարձատրում, քան մեր հայրերին:

Մեր հայրերը տանը լվացք են անում,
խակ մենք աշխատում ենք: Մեր մայրերը
նույնպես աշխատում են: Կապիտալիստը
գիտակցում է իր շահը, նա իր արգյունա-
բերության մեջ աշխատեցնում է միլիոնա-
վոր մայրերի և նրանց զավակներին:

Մեր տանջանքը շատ է, բայց զբանով
չի վերջանում մեր կյանքը:

Մենք, պատանիներս, գիտենք կովել հե-
րոսաբար:

Անում ենք հաճախակի ընդհանուր գոր-
ծադուլներ, կազմակերպում ենք բողոքի
միտինգներ՝ որեցոր աշխատավարձի կրճ-
ատման դեմ, պայքարում ենք անվերջ՝
մեր ընկերներին բանտից ազատելու
համար:

Մեր կյանքը լի յե պայքարով:

Զրկանքը մեր անբաժան ընկերն է:

Յերեկ մեր ընկերներին յերեքին ձեր-
բակալեցին՝ թողուցիկներ տարածելու համար:

Մենք բողոքի ցույց կազմեցինք, ընդու-
նեցինք բողոքի բանաձև և հանձնեցինք
վոստիկանատան վարչությանը, վորպեսզի
նրանք մեր ընկերներին բանտից ազատ
արձակեյին:

Նրանք մերժեցին:

Մենք զայրացանք, կազմակերպված
շարքերով դիմեցինք դեպի վոստիկանատան
վարչությունը, վորտեղ ձերբակալված էյին
մեր ընկերները:

— Ազատ արձակեք մեր ընկերներին —
մոնչում եր հավաքված ամբոխը:

Մեզ միացան նաև աշխատանքից տուն
վերադարձող կանայք և յերեխաները:

Մեզանից մեկը, վորին կոչում էյին
Ջեմս, վորպես ներկայացուցիչ հավաքված-
ներին, ներս մտավ վոստիկանատան վար-
չություն և մեր անունից պահանջեց — ա-
զատ արձակելու մեր բանտարկված յերեք
ընկերներին:

Նրանք դարձյալ մերժեցին:

Ջեմսին ծեծի յենթարկելով դուրս շար-
տեցին շենքից:

— Դեպի քա՛ա՛ր — կոչեց մեր ընկեր-
ներից մեկը:

Կարծես հուզված ամբողջ աշխարհը կոչին եր
սպասում, քարե կարկուտ տեղաց փոստի-
կանատան վարչության լուսամուտներին:

Աղակիները փշուր-փշուր յեղան:

Մենք ներս խուժեցինք, բայց արդեն
չբղապատված էյինք զինված, ձիավոր փոս-
տիկանների հարյուրակներով:

Սկսվեց կատաղի կռիվ:

Յերեք հոգի սպանված և շատ վիրա-
վորվածներ տվինք, նրանցից էլ շատերը
վիրավորվեցին:

Ինձ, իմ տասնուութ ընկերների հետ
ձերբակալեցին և բանտ նետեցին:

Այս նամակը գրում եմ բանտից:

Բայց հեռու չե այն որը, յերբ մենք էլ
ձեզ նման, ձեր որինակով, մեր հայրերի և
մայրերի հետ միացած, զենքի ուժով կը-
խլենք իշխանութունը նրանց ձեռքից:

Մենք էլ, մեր Հոկտեմբերը կունենանք:

Յե՛վ դա հեռու չե, մոտալուտ է:

Պիոներական բարեններով:

Գերմանացի պիոներ՝ Հանս.

Մյունխեն, բանտի 4-րդ կամերա.

10-ապրիլի 32 թ.

Վաղոն վերջացրեց:
Բոլորը մեծ ուշադրությամբ լսում էյին
նամակի ընթերցումը:

— Առաջարկություններ — ասաց Չարիկը:
Բարձրացան տասնյակ ցուցամատեր:

— Դուք ասացեք, ընկեր եմմա:
— Յես կառաջարկեյի ընտրել մի յեռյակ,
վորը մեր կոլեկտիվի անունից մի պատաս-
խան-նամակ գրի նրանց:

Յերկարատե ծափահարություններ:

II.

Յերեք որից հետո կոլեկտիվի հավա-
քույթում ընթերցվում եր յեռյակի գրած
պատասխան — նամակը:

«Գերմանական պիոներներին:
Լենինականի «Ճրուռնոգ»-ի անվան
պիոներական կոլեկտիվից:

Թանկագին ընկերներ.

Մենք, Խորհրդային Հայաստանի պիոներ-
ներս, Միության վողջ պիոներների հետ
միասին, լծվել ենք սոցիալիստական շինա-
բարության հսկա գործին և ցույց ենք տա-
լիս մեր ակտիվությունը՝ սոցիալիզմի կա-
ռուցմանը մեր յերկրում:

Մենք դուրս վճռեցինք դաշնակ-մատու-
գերիստներին մեր յերկրից և հիմա յեւ վո-
չնչացնում ենք կուլակութեանը մեր յեր-
կրում, վորպես դասակարգ:

Մեր գործարանները, խորհրդանոսու-
թյունները և կոլտնտեսությունները, յերբ
զգում են ճեղքվածքների մոտալուտ վտան-
գը, անմիջապես վրա յենք հասնում և նը-
րանք եւ վոչ միայն կատարում են իրենց
պլանները, այլև գերակատարում:

Կատարել և գերակատարել...

Այս յերկու բառերը, յերկու շեշտակի
հարված ե համաշխարհային կապիտալիզ-
մին:

Մենք մեր յերկրում իրագործում ենք
հնգամյակը:

Դա այն պլանն է, վոր դասակարգային
թշնամին համարում եր ցնորք...ուտոպիան...

Նրանք ասում եյին, վոր «հնգամյակը
բոլշեվիկները չեն կարող իրագործել նույն-
իսկ 100 տարում...»

Բայց մենք, իբրև պատասխան այդ
վարանաջություններին և գուշակություն-
ներին, հնգամյակը իրագործում ենք 4
տարում:

Բագվի նավթի հերոսները հնգամյակը
կիսեցին:

Թող սրի համաշխարհային բուրժուա-
զիան իր փտած ժանիքները, կապիտալիզ-
մի ժանգոտած լեսանի վրա, բայց Խորհրդ-
դային Միութեան աշխատավորները յեր-
կրագնդի մեկ վեցերորդ մասում, պրոլետա-
րիատի հայրենիքում, ավարտելով սոցիա-
լիզմի ֆունդամենտի կառուցումը, կավար-
տեն և սոցիալիզմի հաղթական կառուցումը:

Պիոներական բարեներով:

Լենինականի ընկ. «Ֆրունզե» յի ան-
վան պիոներական կոլեկտիվ:

Հայաստան-Լենինական
21 հուլիսի 1932 թ.

Ընդունվեց միաձայն և վորոշվեց վոր նա-
մակը մյուս որն և յիթ ուղարկելը

ՉԻԼԻԿՈՆ

Ի վանովկա գյուղումն եր ծնվել Չիլիկոն: Տասներկու տարին հազիվ եր լրացել, յերբ հայրը՝ նրան քաղաք տարավ:

Այնտեղ, վորտեղ ապրում և աշխատում եր հայրը, իր վորդուն ևս աշխատանքի դըրեց, և քաղաքում նրանք ապրում էին միասին:

Չիլիկոն շատ նիհար տղա յեր, նրա ամբողջ մարմինը դեղնագույն եր: Դեմքի վրա աչքի յեր ընկնում նրա տափակ քիթը և խած աչքերը, վորոնք խորն էին ընկած:

Հանքը, վորտեղ աշխատում էին նրանք, շատ եր խոնավ, ամենուրեք հոտում էին մանր առվակներ, վորոնք կուտակվելով իրար վրա, կազմել էին ստորերկրյա փոքրիկ լճեր:

Ելեկտրականության փոխարեն, վառվուս էյին լապտերներ, վորոնք լուսավորում էին միայն յերկու քայաչափ, մնացածը խավարի միջ եր թաղված:

Մեջտեղով անցնում եր վագոնետկանների նեղ գիծը, վորը վերջանում եր հանքի մուտքի մոտ:

Հենց մուտքի մոտ եր գտնվում վերու վար ցատկող մեքենան, վորը բարձրանալիս՝ տանում եր իր հետ հանքով բարձած վագոնետկաններ, իսկ ցած իջնելիս, փոխադրում եր հանքավորներ և դատարկ վագոնետկաններ:

Չիլիկոն հոր հետ ապրեց մոտ յերեք ամիս, վորից հետո հորը ժանդարմերիան բանտարկեց:

Չիլիկոն մնաց մենակ, նա աշխատում եր որական տասն և մեկ ժամ, առանց մի բոպե հանգստանալու: Նրան այլ ևս հոգացող չկար:

Մայրը քաղցից եր մեռել, իսկ հորը բանտարկել էին:

Ի՞նչ աներ խեղճ Չիլիկոն:

Յերբ հայրը չեր բանտարկված, ինքը ապրում եր հոր հետ, միասին, իսկ այժմ, հում հետ ապրի, ի՞նչ անի նա այժմ:

Բանվորներն ևս զժգոհում եյին, նրանք էլ Չիլիկոյի հասակի յերեխաներ ունեւին, վորոնք աշխատում եյին:

— Ախար մեռնում են—գանգատվում եր Անդրեյը Վասիլին—տանը հաց չկա, յերեխաս հիվանդ մեռնում ե—և նա բուռնցքով եւիում եր կրծքին և հառաչում:

— Ախար տասը տարեկանը ինչպես կարող ե ծանր աշխատանք տանել, արդեն յերեխայիս մեջը ծովել ա—ասում եր Դիմիտրին մյուս բանվորներին՝ աշխատանքի ժամանակ:

Չիլիկոյի պաշտոնը, գծերն ստուգելն եր:

Ամեն առավոտ, ժամը 5-ից մինչև յերեկոյան ժամի 4-ը նա վոտի վրա վազում եր մի գծից մյուսը, գիծը ստուգելու, արդյոք գիծը չի բանգված, կամ արգելք չկա և այլն:

Մոնավ ե հանքում, քարածխի ձեղքվածքներից ջուր ե կաթկթում:

Ռըը հանքում խեղդիչ ե:

Չիլիկոն զժվարութլամբ ե քայլում:

Նրա պարանոցից կախված լապտերը ցավացնում ե, նա յերկաթե ձցըը չի կարողանում պահել ձեռքում, այլ բարը ե տալիս,

այնպես, վոր խավարի մեջ գնզգնզոց լսողը գիտեր, վոր Չիլիկոն ե:

Պատահում եիս որեր, շաբաթներ, վոր Չիլիկոն արևի յերես չեր տեսնում: Նա շատ աշխատելուց հետո խիստ հոգնում եր: Հանում եր վրայի պինջակը, քցում խոնավ քարածխի հատակին և քնում:

Հաճախ ել, յերբ նա խիստ տկարության պատճառով բացակայում եր, կորած կամ մեռած համարելով, բանվորներն սկսում եյին նրան փնտռել և յերբ գտնում եյին, շատ կյին ուրախանում:

Յերբ ծեր Իվանը տեսնում եր լուսի տակնրա կմախքացած ղեմքը, սպիտակահեր գլուխը տատանում եր և ասում.

— Եխ, եխ, Չիլիկո, անբախտ Չիլիկո:

Իվանը վաթսուն հինգ տարեկան մի ծերունի յեր: Նրա վորդուն յերկու տարի առաջ տարան և նա այլևս չվերադարձավ, և վոչ մի տեղեկություն չստացավ նրանից:

Թե ինչո՞ւ տարան Իվանի վորդուն, Իվանը վոչինչ չհասկացավ:

— Նա փոքր ժամանակ շատ եր քեզ նման, Չիլիկո—հաճախ ասում եր ծեր Իվանը, աշխատելով վորդու մտապատկերը հի-

չել. նայում եր խավարի միջից, աղամանդի պես փայլ տվող քարածխի կտորներին և յերկար ժամանակ հայացքը մի կետի հառած նայում եր, նայում ու նայում:

— Ի՞նչ ես փնտռում եմտեղ, քեօ՛ր Իվան—հարցնում եր Չիլիկոն:

Իվանը շատ—շատ եր տխրում, յերբ մտածում եր, հաճախ ել արտասւլում եր:

— Չգիտեմ ինչու, Չիլիկո, յերբ մի որ քեզ չեմ տեսնում, շատ եմ տխրում, նույնիսկ հիվանդությունն ե գալիս վրաս—ասում եր Իվանը:

Իսկ Չիլիկոն միշտ լսում եր ու ձայն չեր հանում:

Մեկ անգամ Չիլիկոն յերկար չերկաց: Բանվորները նրան արդեն մեռած եին կարծում:

Սկսեցին փնտռումներ կատարել, վոր գոնե դիակը գտնեն, չնեխվի:

Ամբողջ հանքը տեղ չլիցկեցին, 2-3 խումբ մարդիկ լապտերները ձեռքերին սկսեցին փնտռել Չիլիկոյին, բայց իզուր, նա չկար: Կասկածներ հայտնեցին, թե կարելի չէ լինն ե ընկել:

Լիճը գտնվում ե հանքի սեջ, յերեք կիլոմետր հեռավորության վրա:

Մի խումբ բանվորներ ել գնացին այնտեղ տեսնելու, նույնիսկ նրանցից մեկը մտավ լճի հատակը ստուգելու, հո այնտեղ չի— փնտռումներն անողուտ անցան:

Մի քանի ժամանակից հետո Չիլիկոյին դարձյալ հանքում տեսան, լապտերը վզից կախե յերկաթե ցողը ձեռքին: Պատահող բանվորները հետաքրքրությա՛յր հարցնում եյին:

— Չիլիկո, վորտեղ եյիր կորել:

Չիլիկոն իհարկե չեր պատասխանում, միայն ուսերն եր շարժում:

Ամենից շատ Չիլիկոյին կարոտել եր ծեր Իվանը: Նա ի՞նչքան ե լաց յեղել Չիլիկոյի բացակայության համար:

Յերբ ծեր Իվանը տեսավ Չիլիկոյին, բացակայությունից հետո, նա ձեռքերը բաց արավ ողում, այնպես փաթաթվեց Չիլիկոյին, ինչպես յերբեք չի փաթաթվում հարազատ ծնողը իր վորդուն:

— Չիլիկո ջան, յես քեզ մինչև հիմա մեռած եյի կարծում, արցունքները սրբելով ասաց ծեր Իվանը:

Չիլիկոն այսոր ուրախ եր:

Նա ծեր Իվանին քաշեց հանքի մի անկյունը և ասաց:

— Բեռի Իվան, դու գիտե՞ս թե ովքեր են սոցիալիստները:

— Գիտեմ, գիտեմ եզ շատախոս խաթառալաներին:

Չիլիկոն աչքերը խոժոռեց Իվանի վրա:

— Յես ել հո սոցիալիստ եմ, քեռի Իվան, ուրեմն յես խաթաբալո՞ յես:

Բեռի Իվանը հարցական նայեց Չիլիկոյին:

— Ի՞նչ սոցիալիստ ես:

— Այո, քեռի Իվան, յես սոցիալիստ եմ: Նրանք մի պահ լուռ մնացին:

Չիլիկոն լուռթյունը կիսեց:

— Բեռի Իվան, եզ վճռեցից գիտես, փոր սոցիալիստները խաթաբալա յեն:

— Իմացել եմ, վորդի... դե ջահեհներ են. գալիս են մի բան բռնում, կիսատ-պռատ խոսում, հա խոսում ու վերջը մենք ենք տուժում:

— Իմացել ես, համա սխալ ես իմացել, սոցիալիստներն աղքատ շահագործված մարդկանց պաշտպան են և բարեկամ, նրանք

կովում են աղքատ, շահագործված մարդկանց համար. հասկացա՞ր, քեռի Իվան:

— Իսկ դու վճռեցից գիտես:

— Բա վճռեց եյի յես այսքան որեր... —

Չիլիկոն կիսատ թողեց խոսքը և հարցրեց —

— Բեռի Իվան, փոչ վոքի չե՞ս ասի:

— Հանգիստ եղիր, Չիլիկո ջան:

— Նրանց մոտ եյի, քեռի Իվան — շարունակեց Չիլիկոն:

— Ի՞նչպես գաար նրանց, հ՞ը, դե՞, պատմիր. Չիլիկո ջան:

Նրանք նստեցին մի մեծ հանքաքարի վրա, լապտերի լույսը հանգացրին, վոր իրենց չնկատեն և Չիլիկոն սկսեց իր փոքրիկ պատմությունը:

— Սրանից ամիսներ առաջ, մի օր, յերբ յես աշխատանքից շատ հոգնած, սոված գուրս յեկա շախտից և գնացի գրասենյակ փողխնդրելու հացի համար, այնտեղ յես պատահեցի մի խումբ բանվորների, վորոնք խիստ վիճում էյին նոր կառավարչի նոր կարգադրությունների մասին, աշխատանքի պայմանների մասին, և աշխատավարձի մասին: Յես առաջին անգամ էյի լսում և տեսնում, վոր վարձկան բանվոր մարդը ալդպես հա-

մարձակ խոսեր կառավարչի և կառավարու-
թյան ներկայացուցիչների հետ. յես քաղ-
ցրո մոռացա և կուչ յեկա մի անկյունում,
յսում եյի: Բանը վերջացավ նրանով, վոր
կառավարիչը սպառնաց կառավարության
ներկայացուցչի միջոցով խստիվ միջոցների
ձեռնարկելու՝ կարգը խանդարողների դեմ,
իսկ բանվորները հայտնեցին, վոր յեթե իրենց
պահանջները չբավարարեն, այն ժամա-
նակ նրանք հայտարարելու յեն գործադու-
կառավարիչը և կառավարության ներկա-
յայացուցիչը կառք նստում և հեռանում են:
Բանվորները դուրսը տաք-տաք փիճում եյին.
յես նկատեցի, վոր նրանցից մեկը առանձին
ուշադրություն դարցրեց ինձ վրա: Ես դի-
մեցի գրասենյակապետին, խնդրեցի հացի
փող, բայց նա վոչ թե ինձ մերժեց, այլ և
հրելով դուրս շարտեց գրասենյակից: Դըր-
սում նույն բանվորը, վոր ինձ հետևում
եր, մոտեցավ և հարցրեց բանի ելությունը,
հարցրեց, թե վոր հանքումն եմ աշխա-
տում, ինչ եմ անում. և ինչքան ժամա-
նակ ե, տեղեկացավ իմ դրության հետ,
և ինձ հացի փող տալով՝ հեռացավ իր ընկեր-
ների հետ: Այդ քեռի Կիրիլը, — այդպես եյին

նրան կոչում, քանի անգամ գալիս ե մեր
հանքը և տեղեկանում մեր հանքի պայման-
ների հետ, հետո յես իմանում եմ, վոր իմ
մասին նա տեղեկություններ ե հավաքել
մեր բանվորներից:

— Հա, ճիշտ ե, Չիլիկո ջան, ինձնից ել
ե հարցրել քո մասին. հետո, հետո:

— Հետո, քեռի Իվան, նա մի որ ինձ
տանում ե իրենց մոտ, ծանոթացնում ե
ուրիշ բանվորների հետ, վոր այնտեղ գրել,
կարգալ են սովորում, նրանց համար մի
ուրիշ ընկեր գրույցներ եր անուս և շատ
բաներ նովորացնում: Յես հաճախ լինում
եմ նրանց մոտ, այնտեղ յես գրել, կարգալ
եմ սովորում, այնտեղ քեռի Իվան, յես իմա-
նում եմ, թե ուրիշ յերկրի մեզ պես բան-
վորներն ինչպես են ապրում և ինչ են ա-
նում, վոր մեզնից լավ են ապրում: Յես
այնտեղ իմանում եմ, քեռի Իվան, վոր կա-
ռավարությունը ժողովրդի հարկերը վոր
հավաքում ե, ինչի վրա յե ծախսում: Ինչո-
ւ կառավարությունը միշտ պաշտպանում ե
գործարանատերին, հանքերի տերերին: Վոր
յեթե, քեռի Իվան, մենք, բանվորներս, հա-
վաքվենք, միանանք, միմիանց ոգնենք, կա-

բող ենք շուտ մեր դրութիւնը լափացնել
և շատ բան ձեռք բերել մեզ համար: Քեռի
Իվան, յես այնտեղ իմացա, թե ովքեր են
սոցիալիստները, և ինչ են ուզում նրանք
բանվորներէ համար:

— Քեռի Իվանը հոնքերը կհտած լսում
եր լուռ, հետո աչքերը բարձրացրեց, նայեց
Չիլիկոյին լի հայացքով: Մթության մե
նրա բիբերը փայլում էին և կարծես նա
անհանգիստ էր:

— Հմ, լավ, ասաց նա, դե ասա, այնտեղ
մեր բանվորներից ել կային...

— Կային, քեռի Իվան, կային, բայց
յես չեմ կարող ասել, թե ովքեր...

— Հըմ, ինչ՞նչ, միթէ յես ժանդարմ եմ,
վոր ինձնից թաղցնում ես:

— Վոչ, քեռի Իվան, վոչ, յես հավատում
եմ, յես համոզմամ եմ, վոր դու թե վոր
ծանոթանաս, իմանաս, դու յեյ կլինես—դու
յեր... Ին լսիր, քեռի Իվան, դու Մատվեյին լավ
գիտես, հավատում ես, խոսիր նրա հետ,
հարցրու նրանից, բայց շատ եմ խնդրում
մի ասա նրան վոչինչ, վոր յե՛ս եմ քեզ
ասել:

— Կավ, լավ, հետո՞:

— Այդպես յես նրանց հետ կապած
էյի, յերբեմն նրանք ինձ թուուցիկներ էյին
տալիս, յես նրանց զաղանի կայցնում էյի
պատերին կամ տարածում էյի և վոչ վոք
չգիտեր, վոր յես եմ այդ անողը: Այն որը,
յերբ այստեղից յես գնացի, ինձ կանչել էյին
շտապ, զորժադուլի պատրաստութիւններ
էյին տեսնվում, ինձ տվել էին մի կապ
թուուցիկներ տարածելու. բոլորը զբաղված
էյին, շտապում էյին, յես էլ շտապ հեռացա:
Նաչալնիկի տան ատաջ հարուստ սղանե-
րը, վորոնք ինձ տեսնելիս ծաղր էյին անում,
ինձ հանգիստ չթողին. յես քաղցից կատա-
ղած էյի. նրանք ինձ ավելի զայրացրին,
նստած քաղցրավենի էին ուտում, ընկույզ,
կոնֆետ, իսկ կձեպները իրար հետեից նե-
տում իմ գլխին:

Յես կատաղեցի և առաջի դեմս յելնողին
մի հարվածով գլորեցի: Ինձ շրջապատեցին,
մենք կովի բռնվեցինք, յես մոռնում էյի
կատաղած վագրի պես. մեկել ինչ, յես գո-
րոզովոյի բազկի տակ եմ:

Բռնիր, սա գող է, գող, ասում էյին տղայք:

— Սուտ է, սուտ, բողբոլում էյի յես. թող
տղեր յես գնամ:

Բայց իզուր, յես թակարդն եյի ընկել, բարձ են տալիս ինձ վոստիկանատուն:

Վախից սիրտս դողում եր, իսկ վոստիկանն ամուր բռնել եր բազուկս և սեղմելով քաշում:

— Դե ներս անցիր, շան ծնունդ, հրում եր նա ինձ:

Իմ զիմաց բացվում ե մի դուռ, ուր նստած եր ուսադիրներով, սուր բեխերով և դաժան դեմքով մի մարդ: Ինձ տեսնելով դեմքը խոժոռեց:

— Գող ե, զրպանահատ, ասաց ինձ բերողը:

Յես լուռ եյի:

Դաժան դեմքով մարդը վեր կացավ և մոտեցավ ինձ:

— Առ քեզ, ասաց նա, շուն շան լակոտ և մի ուժեղ ապտակ իջեցրեց յերեսիս, յերեսուն ճիպտս սրան: Բթիցս արյունը կաթկթեց շորերիս վրա: Յերկու վոստիկաններ ինձ տարան ներս, մի սենյակ, ուր բացի մի չոր փայտե թաղթից, ուրիշ վոչինչ չկար: Նրանք ինձ մերկացրին: Թոռեցիկների զրտներու սարսուռը տիրեց ինձ: Դոտիս քանդելուց հետո, թոռեցիկներէ կապը վայր ըն-

կավ:—Այդ ինչ ե, հարձակվեցին նրանք կապոցի վրա և բացելով կապը սկսեցին մեկ մեկ նայել:

— Ան. պրոկլամացիա... Վոստիկաններից մեկը գնաց և կանչեց խոժոռ դեմքով մարդին, նա յեկավ, իսկույն խլեց կապոցը և սկսեց արագ քննել. յես սարսափից դողում եյի:

— Լավ, դուք դուրս յելեք, ասաց նա վոստիկաններին. վոստիկանները հեռացան:

— Լսիր, տղա,—նա մոտ յեկավ և ասաց, նստիր այստեղ, շապիկդ հագիր և գոտիս ել կապիր:

Յես հնազանդվեցի և նստեցի նրա մոտ թաղթի վրա:

— Լսիր, իհարկե դու մեղավոր չես, քեզ ուրիշներն են մոլորեցրել և վտանգի յենթարկել, յեթե դու մեզ ասես, թե ո՞վ ե քեզ տվել այս թոռեցիկները, մենք քեզ չենք նեղացնի, կարձակենք և վարձատրություն ել կտանք:

— Վոչ վոք չի տվել, յես հանքից գուրս գալիս՝ դոան մոտ դտա և վորպես թուղթ վերցրի մանրավաճառին ծախելու:

— Իզուր ես հակառակում, յես քու
ողախն եմ ասում, թե չե իզուր կփաես
բանտում, ավելի լավ ե ասա և ազատ-
վիր, թե չե կհանձնեմ ժանդարմային
և գործը կդժվարանա:

— Յես բան չունեմ ասելու:

— Հե՛յ, գուտաց նա վոստիկաններին:
Վոստիկանները ներս մտան— կրկնապատկել
ճիպոտները:

— Հանիր շապիկդ, գուտաց մեկը և բը-
սունցքը իջեցրեց գլխիս պառկել թաղթին:
Ինձ կապեցին տախտակին:

— Խըջիր ճիպոտները, շուտով այս սո-
ցիալիստը կիմանա ճիպոտների ուժը և գո-
րությունը— և ճիպոտը ողի մեջ սուլելով
իջավ մերկ մարմնիս: Յես բզավեցի, բայց
լաց չեղա: Բ՞ան ունես ասելու— մտե-
ցավ խոժոռ դեմքով մարդը: Յես արդեն
թուլացել էյի, իսկ վոստիկանը դեռ նոր
սկսեց համարել— յերեք, հինգ վեց— յես
այլ ես փոչինչ չզգացի: Աչքերս բաց արի
և ինձ գտա մի խոնավ ու մուխ անկյու-
նում, կիսամերկ, վերքոտ: Յերկար ինձ
չարչարեցին, վոր իմանան, թե ո՞վ ե ավել
ինձ թուլեցիկները, բայց փոչինչ չկարողա-

ցան իմանալ: Յես, քեռի Իվան, պատրաստ էյի
փոչ թե բոլոր ցավերը տանելու, այլ մեռ-
նելու, բայց բնավ իսկ չմտածելու, թե ո՞վ
ե ավել ինձ թուլեցիկները, վոր նրանք չի-
մանան և չգտնեն նրանց: Բայց, իհարկե,
ապարդյուն: Ինձ ուղարկում են բանտ:
Բանտում ինձ շրջապատում են, այնտեղ բան-
տում նստած հեղափոխականներն սկսում են
հարց ու փորձ անել. յես պատմում եմ ա-
մեն ինչ, ինչ վոր ինձ հետ պատահել էր:
Նրանք ինձ շատ սիրալիք հյուրնկալում են
և յերբ իմանում են, վոր մեջքս մարահներին,
ձե՛ծից վերքեր ե կապել, տեղափոխում են
ընկ. Մորոզովի կամերը և սկսում են ինձ
խնամել: Վորքան լավ էյի յես զգում ինձ
նրանց մեջ, կարծես յես բանտում չեյի, այլ
մեր գյուղի, իմ հարազատների մոտ: Գիշեր-
ները «պրովերկա»-յից հետո մենք նստում
և յերկար զրուցում եինք: Ընկ. Մորոզովը
պատմում եր սոցիալիստների գործերից,
պայքարից, կյանքից: Մի որ նա ինձ ասաց,
ուզո՞ւմ ես յես քեզ կազատեմ, կոգնեմ քեզ
փախչելու, միտք չկա այստեղ նստելու:

Մեր բանտի լուսամուտները նայում
էյին մի ձորի վրա, վորտեղ միայն մի պտ-

հակ կար կանգնած. ընկեր Մորոզովը մի նամակ գրեց, նամակը մենք կարեցինք իմ գլխարկի ծալքերից մեկում:

— Նամակը կ տաս անամբ ընկ. Մոմովին, իսկ մնացածը ինքդ կպատմես և կասես՝ ինչ յես քեզ ասացի:

Գիշերվա «պրովերբայից» հետո յերբ ուշ խավար գիշեր էր, մենք կտրտած վերմակից պատրաստեցինք թոկ և կապկպեցինք: Պատուհանի վանդակի յերկաթե միջանցքը արդեն սղոցել էյինք. ճրագը հոնգ-ցրինք և լսողութուններս լարած սպասում էյինք, վոր պահակը սուլելով հասներ անկյունին և ծովեր մյուս կողմը: Մորոզովը թոկը կապեց մեջքիս, մենք համբուրվեցինք, նա ամուր սեղմեց իմ ձեռքս և ասաց:

— Բարևիր ընկերներին, գնա, մի վախեցիր, շուտով կտեսնվենք: Յե՛վ նա արագ պոկեց վանդակի միջանցքը, նայեց չորս կողմը, անտղեց վոր ապահով է և ոգնեց ինձ դուրս յերևելու վանդակից: Յես կախվեցի և սկսեցի իջնել ներքև. ներքևում հոսում է գետը: Ընկ. Մորոզովը թոկը վերևից պահեց, հետզհետե բաց թողնելով մինչև

յես հասա գետի ափը և ցնցեցի թոկը: Թոկը քանդեցի: Մորոզովը թոկը վերև քարեց: Նայեցի չորս կողմս, վոչինչ չեր լսվում և յերևում: Պահակը խոսում էր, մեկի հետ, ուրեմն ուշադրությունը զբաղված էր: Յես շտապ և առանց աղմուկի մտա ջուրը և սկսեցի լողալ դեպի մյուս ափը: Ափը բավական հեռու յեր. վորպեսզի չդգում ավի հեռավորությունը, աչքերս փակեցի և սկսեցի լողալ ուժերս հավաքելով. յերբ աչքերս բաց արի, արդեն հասել էյի:

Ափը դուրս յելա, շորերս շալակիցս քանդեցի, թրջված էյին, մրդեցի և հազա. ուր գնամ: Կամաց սողալով մի անդ կուշ յեկա մինչև իմանամ, թե իմացել են, ինձ հետեւում են, թե վոչ: Հիշեցի, թե գետի ուղղությամբ վերևը գտնվում էյին փայտի պահեստներ, յես կամաց կամաց սկսեցի սողալ. յերբ բերդի՞ շրջակայքից հեռացա, քայլերս արագացրի և հասա փայտի պահեստներին, մտա նրանց մեջ, այնտեղ վորոշեցի պառկել, շորերս չորացնել, այդպես էլ արեցի, պառկեցի, քունս տարավ, քնեցի:

Արթնացա, արդեն արևածագ էր. քաղաքում սկսվել էր սովորական շարժումը,

անց ու դարձր: Յես քայլերս ուղղեցի նա-
մակի հասցեով ընկ. Սոմովին գտնելու:

Հասա քաղաք, գտա տունը և ներս մը-
տա. դուռը թակեցի, մի կին դուռը բաց
արեց և հարցրեց թե ումն եմ ուզում. յես
ասացի: Յերկու բուպեյից մի ծերունի դուրս
յեկավ, հարց ու փորձ արեց և ներս
տարավ ինձ մի սենյակ գրքերով, լրագը-
ներով լեբը:

Ներսի սենյակից դուրս յեկավ մի ակ-
նոցավոր, սև միրուքավոր մարդ և հար-
ցրեց՝ թե Սոմովին ո՞վ է ուզում:

Յես հարցրեցի, դուք եք Սոմովը:—Այո,
յես եմ, ինչ կա:

Յես ասացի պայմանական նշանը. նա
պատասխանեց. այն ժամանակ յես սկսեցի
գլխարկիս ծալքը քանդել, հանեցի նամակը
և նրան մեկնելով ասացի, վոր բանտից
Մորոզովն է ուղարկել:

—Մորոզովը,—հարցրեց նա և նրա հետ
յերկու ուրիշներ, վորոնք ներս եյին մտել:
Ինձ շրջապատեցին և հարցերի տարափ
եք, վոր թափվեց իմ գլխին. ես չեյի վեր-
ջացնում մեկին պատասխանել, մյուս
հարցն եյին տալիս: Յես պատմեցի համա-

տոտ գլխիս անցածը, նրանք մեծ ուշադրու-
թյամբ և հետաքրքրությամբ լսում եյին.
հետո ինձ առաջարկեցին լվացվել: Լվացվե-
ցի, հագնվեցի, ստեցի սեղանին, նրանք ինձ
կուշտ կերակրեցին և պատվիրեցին պառ-
կել հանգստանալու:

Յերեք որ նրանց մոտ հանգստացա, ծա-
նոթացա շատ ընկերների հետ, բեռի կի-
րիլը նույնպես յեկավ այնտեղ և շատ ու-
րախացավ, յերբ տեսավ ինձ այնտեղ. յես
իմացա վոր շուտով պիտի լինի շորձա-
դուր: Յերեք որ հանգստանալուց հետո, յես
հայտնեցի վոր պիտի գնամ աշխատանքի.
նրանք գտնում եյին, վոր շուտ է, պետք է
միառժամանակ մնալ, հանգստանալ և մի
բան մտածել, վոր նրանք հետքը չգտնեն:
Յես գտնում եյի, վոր իզուր է աշխատան-
քից կտրվելը, նամանավանդ վոր պիտի գոր-
ծադուլի պատրաստության համար գործել
և ոգնել աշխատանքներ տանելու, իսկ ինչ
վերաբերում է ինձ հետևելուն, մեր հան-
քում զժվար է ինձ գտնել: Շնորհակալու-
թյուն հայտնելով, յես մեկնեցի հանքերը և
ահա այսոր հասնելով՝ սկսեցի աշխատել
առաջվա պես:

Քեզի Իվանը գլուխը բարձրացրեց. նա-
լեց Չիլիկոյին, նրա աչքերի մեջ փայլեցին
արցունքի յերկու մեծ կաթիլներ, վոր դուրս
պրծնելով՝ գետին գլորվեցին: Նա գրկեց Չի-
լիկոյին, սեղմեց իր կրծքին կոշելով.

— Իմ Չիլիկո ջան, ինչքան դու տան-
ջվել ես, չարչարվել... խկապես վոր դու
փոքրիկ ճերոս էս, հետո լապտերը վառեց,
բարձրացավ և գնաց: Չիլիկոն վերցրեց
լերկաթյա ցողը, լապտերը կախեց վզից և հե-
տևեց ծեր Իվանին:

Սկզբեց Չիլիկոյի առաջվա աշխատանքի
տարամ պատմութիւնը: Հանքն անցնելով,
Չիլիկոյին ով տեսնում էր, մի պահ կանգ-
նում էր ու զարմացած հարցնում.

— Չիլիկո, ո՞ր էյիր, մենք կարծում
էյինք, վոր դու խեղդվել, մեռել էս:

— Յես տկար էյի, դեռ մեռնելու ժա-
մանակը չե, պետք է աշխատել, կուվել: Չիլի-
կոն նկատեց, վոր բանվորների մեջ մեծ ան-
բավականութիւն կա, շատերը գայրացած
են, հաճախ այտեղ, այնտեղ ծոգովվում են,
խոսում, վիճում:

Այդ որվանից անցել էր մի շաբաթ:
Բանվորների և վարչութիւն մեջ հարաբե-

րութիւնները սրվել էյին, արդեն սկսել
էյին ժամանակ առ ժամանակ պահակներ
յերևալ հանքերում:

Բանվորների մեջ գնում էր կազմակերպ-
չական և բացատրական աշխատանք:

Մեծ կռիվ էր տարվում այն մարդ-
կանց դեմ, վորոնք գտնում էյին, վոր ավե-
լի լավ է գիշել, ինչ վոր առաջարկում են
ընդունել և դրանով առայժմ բավարարվել,
քան թե գործադուլ անել և բանվորների
դրութիւնը վատացնել:

Բացի դրանից, այդ նույն մարդիկ բո-
լորովին հակառակ էյին, վճի գործադուլին
տային քաղաքական բնույթ և կարմիր
դրոշակով, Թուրքիկներով և վորոշ պա-
հանջներով յեղնել վարչութիւն դեմ և իրենց
նարարութիւնները վատացնել: Սոցիա-
լիստներն ամեն կերպ մերկացնում էյին
այս համաձայնողական քաղաքականութիւ-
նը և զգուշացնում այդ վտանգավոր քայ-
լից, վորը պետք է դավադրեր բանվորների
շահը, ծախելով նրանց վարչութիւն կամ
իշխանութիւն:

Չիլիկոն առավոտը վաղ դալիս է հանք և
Թուրքիկներ ցրում հանքերում:

Այդ որը ժամը 11-ին հանքերում տի-
րում եր իրարանցում և մի գետնատակյա
աղմուկ: Բաւփորներն աշխատանքը ձգում են
և քլունգները ռուին հալթարվում դուրսը: Մեծ
բազմության մեջ մեկը բարձրացած նստա-
րանի վրա խոսում եր: Չիլիկոն մոտենա-
լով նկատեց, վոր այդ ընկ. Մոմոֆն եր, վոր
արդեն գործի յեր անցել խոսելով գոր-
ծագուլի նշանակության, կազմակերպու-
թյան ձեռնապատաների և այն պա-
հանջների մասին, վոր պետք է լավ մտած-
ված գնել և մինչև վերջ պաշտպանել: Բա-
ցի դրանից, գործագուլը մեծ նշանակու-
թյուն և հաջողություն կունանա, յեթե
բոլոր հանքերը և տրանսպորտը միանան:
Պետք է պատգամավորություն ընտրել և
նրա հետ միասին գնալ մեծ հանքը, վոր
նրանք ել միանան մեզ հետ:

— Հե, այնտեղ արդեն վոստիկանները
ճամբան կարել են, լավեց մի ձայն, պետք
չկա գնալ և գլուխներս վտանգի տակ գնել:

— Գնալ, գնալ— գոտաց ամբոխը:

— Վոստիկաններից չպետք է վախե-
նալ, մեծ հանքի բանվորները նույնպես
համակարծիք են. պետք է միանալ նրանց

հետ: Թե որ վոստիկաններն արգելք են հան-
դիսանում, պետք է ցույց տանք մեր կազ-
մակերպված լինելը, և դրա ուժով դեն
մղենք վոստիկաններին մի կողմը:

— Գնալ, գնալ, կրկնեցին բանվորները:
— Մեզ հարկավոր է կազմակերպված
գնալ. ընտրենք առաջ մի պատգամավո-
րություն, մի ղեկավար մարմին— գործա-
դուլային կոմիտե և այնուհետև անցնենք
գործի. աշխատանքը պետք է բաժանենք,
կարգապահներ նշանակենք, հետո առաջ շար-
ժվենք կազմակերպված:

— Ով չի ուզում, կարող է դուրս յեխել
շարքերից:

— Այժմ մեզ մեկը հարկավոր է, վոր առ-
ջեից գնա և տանի կարմիր դրոշը:

Բոլորը լուռ ելին,

— Յես կաանեմ:

— Ո՞վ է, ո՞վ, առաջ յեկ:

Նիտ շարքերը ձեղքելով առաջ եր գնում
մի փոքրիկ տղա: Յերը Սամվը տեսավ
նրան, կոչեց զարմացած:

— Չիլիկո, այդ դո՞ւ յես, առաջ յեկ:

— Յես եմ, յես կաանեմ կարմիր դրո-
շը, տաաց և բռնեց դրոշը՝ զրպանները լիք

Թողցիկներով: Ամբոխը յերգելով շարժվեց
դեպի մեծ հանքը: Ծանապարհին կանգնած
հաս ու հաս պահակներն ստիպված էյին ճա-
նապարհ ասլ բանվորական կազմակերպված
ուժին:

Հասնում են մինչև յերկաթուղու գանցը:
Այստեղ նրանց առաջ կտրում է պա-
հակների մի սովոր խումբ: Մեծ հանքի
բանվորները չգիտեցին, վոր բանվորները մո-
տեցել են յերկաթուղուն. պետք եր նրանց
լուր տրվեր, այստեղ սկսվում է միթինկ-
մինչ այդ՝ կոմիտեն մտածում է մեկին ու-
ղարկել նրանց լուր տալու, վոր նրանք
նույնպես մտանան յերկաթուղուն, տրան-
սպորտը զարարեցնելու համար:

Այստեղ նորից Զիլիկան ցույց է տալիս
իր ճարպիկությունը. նա սողոսկելով վա-
զոնների տակից աննշմարելի թռչում, հաս-
նում է հանձնում է նրանց կամիտեյի
վորոշումը: Կես ժամից, մեծ հանքի բան-
վորներն ընդհուպ մոտեցել էյին կանվո-
յով-ըըշապատած արանսպորտին և ուժեղ
սզմում էյին՝ միանալու միտինդին: Պետք
եր անցնել վազոնների վրայով: Սուլոցը,
կոչերը, յերգը, լոզանգները, հայհոյանքը,

հրամանները խառնվել էյին իրարու և
ստեղծել էյին մի ժխոր.—

—Չմոտենալ, կկրակենք.

Շաչում են վոխերիմ հողմերն աննդհաս
Սեվ, մուք ուժերը կասաղի ճևուս...

... լսվում է յերգը:

—«Գրոճել»—լսվում է հանքից հրաման:

Բանվորները քլունգներով, սուլոցի շաչյունի
աղմուկի մեջ հարձակվում են յերկու
կողմից վազոնների վրա:

—Կրակել, լսվում է հրամանը և սկսվում
է ժխորը, ժայթքումը:

Սուլում են գնդակները, շարժվում
քլունգները:

Յերգը, ճիչն ու աղմուկը, հառաչանքն
ու հրամանը հաջորդում են իրար ու մաս-
սան լավայի պես շարժվում և բռնում վա-
զոններն ու ցանցը: Դիրքերը պրավում են.
միտինգը մեծանում է. թեյազրվում են պա-
հանջներն ու վորոշումները, պահակներն ու
կոնվոյները հեռ են շարավում իրարանց-
ման մեջ:

Գլուխները կորցրած դես ու գեն են
վազում, ոգնությունը ուշանում է. քլունգ-

ները գործում են, գնացքները կանգնում են և բվեարկում գործադուլի պահանջները:

Սկսվում են հավաքել ընկածներին և վիրավորներին: Վիրավորներին շտապ տեղափոխում են: Յերկաթուղազգծի վրա կանգնած օտաջի վագոնների մեկի ստանգուլքի վրայից բարձրացնում են Չիլիկոյին արյունաշաղագ, վիրավոր, ամուր գրկած իր գլխում կարմիր դրոշը:

* * *

Չիլիկոն անգրա պառկած է Սոմոլի անկողնում. նրան շրջապատել են ընկերները: Այտանդ է և ընկեր կիրիլը, Մորոզովը, վորը շատ տխուր, գլուխը բռնած՝ ման է գալիս սենյակում:

Գործադուլը շարունակվում է բոլորն սպասում են Սոմոլին, վոր գնացել է գործադուլի կոմիտեյի նիստին պատգամավորների հետ:

Չիլիկոն սկսեց ծանր շնչել, գլուխը բարձրացրեց, քիչ աչքերը բաց արեց և հարցրեց.

— Չեկա՞վ Սոմոլը:

Մորոզովը բռնեց նրա զարկերակը և ձեռքը դրեց նրա ճակատին:

— Չիլիկո, դու վա՞տ ես գգում: Չիլիկոն բացեց աչքերը, նայեց շուրջը, մրձկաց.

— Հավ կլինե՞ր, վոր Սոմոլը գար, իմանայի՞նք, Իուռը քացվեց և ներս մտավ բժիշկը, նայեց Չիլիկոյին, նստեց անկողնու կողքին և սկսեց խնամքով քննել նրան: Հեռվից փուլոցի կողմից լավեց աղմուկ, յերգի ձայները քանի գնում մտանում էին, ներս յեկավ Սոմոլը, դեմքը ուրախ, հպարտ, աչքերը վառվռուն, Ընկերները շուռ յեկան:

— Հաղթությունը մերն է, պահանջներն ընդունեցին:

Չիլիկոն աչքերը բացեց, նայեց շուրջը, շնչառությունը արագացավ:

— Սոմոլը յեկավ, յես ասեցի հաղթությունը կտանենք:

Շնչառությունը կարվեց, գլուխը ծանրացավ. բոլորը շրջապատեցին նրան, բժիշկը մոտեցավ պատրաստվեց սրսկում անել, բայց ուշ էր:

Չիլիկոն ընկավ բարձին, աչքերը փակեց և քնեց հանգիստ, վոր յերբեք այդպես չեր քնել: Ընկերները նայեցին իրարու,

հեռվից լսվող յերգը մտաեցավ և անցավ.
բանվորներն ելին, վար գործադուլից աւել
ելին վերադառնում յերգելով՝

Բայց մենք կպարզենք անվախ ու հրպարս
Ռազմի րոշակը — բանվորի ազատ,
Ղրոշակը մեծ գործի՝ ժողովրդական,
Հանուր նոր կյանքի — սուրբ ազատության:



ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Պայքարի գրողները	5
2. Աղվես բագոն	48
3. Յերկու նամակ	54
4. Զիլիկոն	62

Ответственный редактор Н. Г. Аваньян
Технический редактор М. Г. Маркарьян
Уполкрайлит № 01856 Издание № 2817. Объем 27²/₃ печ. л.
Сдано в набор 2 X-32 г.
Подписано к печати 25 III-33 г.
Статформат А6 105x148 мм. Заказ № 5520. Тираж 3000.
Газетно-книжная тип. графия СККПТ в Ростове на-Дону

«Ազգային գրադարան»



NL0400103

8598

Цена 75 коп.



На армянском языке

Артуш Эльян

ЗНАМЕНА БОРЬБЫ

Юношеские рассказы

891.9915

5-28

ИЗД-ВО «СЕВЕРНЫЙ КЯВК»

ԳՐԱԳԻՏԱԾԱՐԱՆ

ՄԱՍՅԱԿ ԳՆԷ, ՍՈՍԿՈՎՈՎՈՍԻ ՓՈՂ, 53

ԳՐԱԳԵՆԱՐԱՆ (ԿԵՆՏՐՈՆԱԼ)